


№ 141


ԳՐԱԳԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՄԵՔԵՆԱՆԵՐ

250 նկարով:



ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆ



Տ Փ Խ Ի Ս

Արագ. տպար. Մն. Վարտիրոսանցի  
Միքայելիան փող., տուն № 81.

1898

275


Ընկերութեան հրատարակութիւնները վաճառուով են Ընկերութեան գրասենեակում եւ գրավաճառանոցներում:

1	Թաւամաղ մեղու (սպառ.)	{	Թարգման. օր. ն.	—	40	
2	Կարմիր լալտեր	.	{	Տ. Մարկոսեանի.	—	30
3	Մանկական երգեր, Քամառ-Քաթիլայի				—	15
4	Թովմաս եղբօր տնակը, (պատկեր.)	Թ. օր. ն. Տ.-Մ.			—	45
5	Մորելս և նրա ջնջելու հնար. (սպառ.)	Ն. Տ. Բ.			—	10
6	Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ. Ա.				—	10
7	Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց (սպառ.)				—	80
8	Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան				—	50
9	Գամառ-Քաթիլայի բանաստ. (սպառ.)				—	50
10	Ռօբինզօնի պատմութիւն, Թարգմ. Գ. ք. Ա.				—	60
11	Ուլտաուրը, գործ Վ. Հ. աշխ. Ռ. Պատկանեանի				—	75
12	Գառնուկ և Լուսատոնիկ, Չմիղտի, Թարգմ. Ն.				—	25
13	Մայիս-Նօվա, ազգային երգիչ				—	5
14	Ծննդեան պատմութիւնը				—	10
15	Ազաթանգեղեայ պատմութիւն				—	1
16	Իլիզաբեան խալիֆայ, Ա. Արարատեանի				—	50
17	Վանայ սաղ, Չէրենցի				—	75
18	Փնջիկ, գրեց Աղէքսանդր Արարատեան				—	20
19	Նամուս, վէպ, Չիրվանդադէի (սպառ.)				—	1
20	Ստեփանոսի Տարօն. Ասողկան Պատմ. տիեզեր.				—	2
21	Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, Գ. Տ.-Աղէքս.				—	1 50
22	Լուսնը պատմագիր				—	2
23	Սրբազան պատմութիւն (սպառ.)	{	Ս. ք. Սա-		—	30
24	Գասագիրք կրօնի (ուսուց. համ.)	{	հակեանի.		—	1 75
25	Սոկրատէս, (սպառ.)	Թարգմ. օր. Թ. Ստեփոյ			—	10
26	Պատմութիւն Հայոց, ք. տպ., Ս. Պալասանեանի				—	1 50
27	Ուղեցոյց գործնական շերամապ. Կ. Մ. Չ.				—	40
28	Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Գարգելի				—	1 25
29	Վարդ-Ռէւլին, Սպիրի, Թարգմ. Ի. Յ.				—	10
30	Նալ և Գամայեանթի, Փ. Չմիղտի				—	20
31	Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, Տօլստոյի				—	7
32	Հաստատարիմ Մալիտրին, Վայլուների				—	10
33	Լինհարդ և Գերարուզ, Պետալոցցի				—	25
34	Ցաւելուած ի զիրս պատմութ. Ասողկան				—	20
35	Նաւի փոքրատորը, Մ. Ռոպինճ. Թարգմ. Յ. Լ.				—	15
36	Ուսենց Յովսէփ, Ե. Սպիրի, Թարգմ. Ի. Յ.				—	15
37	Մեծապ. Մուրացկաններ, ք. տպ. Պարոնեանի (սպառ.)				—	40
38	Ազգային ջոջեր, Յ. Պարոնեանի (սպառ.)				—	1
39	Բր-ա-բա, Օժէշկօի				—	15
40	Չնիկ, Կուլիկովայի, (սպառ.)	Թարգմ. օր. Ա. Ա.			—	5
41	Չչեգրինի երեք գրոյցներ Թ. Մ. Ղազարեան				—	10
42	Տարասկոնցի Տարատարներ, Դօդէի, Թ. րժ. Թ. Չ.				—	40
43	Օրլեանի կոյսը, Օստրոգորսկու, Թարգմ. Յ. Խ.				—	25
44	Տարութիւն Արարատեանի կեանքը, Թարգմ. Պ. Պ.				—	75
45	Գաղափարական քաջանայ, Պօտապենկոյի				—	75

Ք 5

Գ Ի Ի Ղ Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Գ Ո Ր Ծ Ի Ք Ն Ե Ր Ե Ի Մ Ե Ք Ե Ն Ա Ն Ե Ր



631.3  
Խ-22

ԹԻՓԼԵՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 141


Գրք

Խ/Բ  
33692


ԳՐԱԳՆԱԿԱՆԱԿ

ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ

250 նկարով



ԼԵԻՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆ



Տ Փ Խ Ի Ս  
Արագ. տպար. Մն. Մարտիրոսեանցի  
Միքայելեան փող., տուն № 81  
1898

275-142

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го Апрелья, 1897 г.



182 - 2013



### ՅԱՒԱԶԱԲԱՆ

Գիւղատնտեսութեան մէջ մերնան  
մեծ դեր է կաղում, թեթեւացնելով  
մարդու աշխատանքը եւ բարձրացնե-  
լով արդիւնաբերութիւնը:

**Ե**րկրագործութիւնը ամենահրաժեշտ և ամենա-  
ազնիւ պարապմունքներից մէկն է: Մարդիկ քաղաքա-  
կրթութեան առաջին օրերից սկսել են պարապել  
երկրագործութեամբ: «Գետինը ոսկի է» ասում է ժո-  
ղովուրդը, և ճշմարիտ գետինը տալիս է մեզ այն  
ամենը, ինչ որ անհրաժեշտ է մարդուս ապրուստի հա-  
մար: Հայ մարդը նախնական ժամանակներից սկսած  
երկրագործութեամբ է պարապել և միշտ սիրել է իր

հողը և իր գութանի մահը: Իր բնիկ երկրի հետ երկրագործութեամբ կապուած հայ գիւղացին միշտ պահել է իր ֆիզիքական առողջութիւնը և դրա հետ միասին իր հողու ազնւութիւնը:

Սակայն մեր երկրի երկրագործութիւնը այսօր էլ այն դրութեան մէջ է գտնուում, ինչ դրութեան մէջ էր նա դեռ Քրիստոսից առաջ: Մեր երկրի աշխարհագրական դիրքը, պատմական երեւուն վիճակը, ուսման և կրթութեան յետամնացութիւնը միշտ արգելք են եղել տեղական արհեստների և մասնաւորապէս երկրագործութեան ծաղկելուն: Այս է պատճառը, որ մեր գիւղացու երկրագործական հմտութիւնը իր պապական հնաւանդ եղանակով վարել-ցանկուց հեռու չէ գնացել: Գիւղացին ձեռնհաս չէ նոյն իսկ մեր օրերում իմանալու թէ՛ աւելի զարգացած երկրներում որքան դիւրացել և արդիւնաբեր է դարձել երկրագործի աշխատանքը՝ նոր ու կատարելագործուած մեքենաների գործադրութեան շնորհիւ, և թէ այդ մեքենաներից ո՞րքան տեսակներ կան, որոնք յարմարեցրած հողին, ջրին և օդին, կարող են թեթեւցնել աշխատանքը և նիւթապէս բարւոքել երկրագործի դրութիւնը:

Միջոց տալ հայ գիւղացուն, հետաքրքիր հայ երկրագործներին և գիւղատնտեսներին, ծանօթանալու երկրագործական նորագոյն կատարելագործուած մեքենաների հետ, և ցոյց տալ թէ զբանցից որո՞նք աւելի օգտակար են գործածութեան համար—այս է

ներկայ գրքի նպատակը, որքան այդ հնարաւոր կլինի կատարել նկարագրութեան և պատկերների միջոցով:

Մինչև այժմ եղած փորձերը ցոյց են տալիս, որ մեր հողագործը կարծես սկսել է փոքր ի շատէ հասկանալ, որ մեքենան հեշտացնում է աշխատաւորի գործը, քչացնում է ծախքը և միևնոյն ժամանակ աւելացնում է աշխատանքի արդիւնքը: Եւ հեռու չէ այն օրը, երբ նա կըթողնի բոլորովին իր ծանր ու անյարմար գութանը և սակաւաշահ կամը, կզաղարի ձեռքով ցանելը, գերանդիով հնձելը, հորսելիով թեղելը և կգործադրի դրանց փոխարինող կատարելագործուած մեքենաներ:

Նուիրելով ներկայ աշխատասիրութիւնը հայ գիւղացիներին և հայ հողատէրերին, յոյս ունեւմ, որ նրանք կարգալով այս գիրքը կտեղեկանան այն մեքենաների մասին, որոնք հարկաւոր են նրանց տնտեսութեան մէջ և յարմար են գործադրութեան համար: Ես աշխատել եմ գրել կարճ, միևնոյն ժամանակ պարզ և հասկանալի ոճով, բաց թողնելով աւելորդ մանրամասնութիւնները, որոնք վերաբերում են միքենաների երկրորդական մասերին և որոնց նկարագրութիւնը կարող է ընթերցողին գլխաւոր գաղափարից հեռացնել:


Մեքենաների մասերը բացատրելիս ես վերցրել եմ մեր երկրի մէջ տարածուած անունները, իսկ երբ համապատասխան անուն չեմ գտել, ստիպուած եմ եղել կազմել յարմար բառեր, որոնց բացատրութիւն-

ները միւս քիչ գործածական բառերի հետ միասին իրանց նկարներով և ուսներէն ու ֆրանսերէն լեզուների թարգմանութիւններով դրել եմ գրքիս վերջում:

Կասկած չկայ, որ գիրքս, ինչպէս մի նոր տեսակի ձեռնարկութիւն, կունենայ և թերութիւններ, որոնց վերաբերութեամբ ամեն մի նկատողութիւն ես շնորհակալութեամբ կընդունեմ և կաշխատեմ օգտուել նրանցից իմ հետագայ հրատարակութիւնների համար, եթէ միայն այդպիսիների կարիք կզգացուի:

Այս աշխատութիւնը բաղկացած կը լինի չորս մասերից. Ա) Հերկող գործիքներ, Բ) Յանող, հնձող, կասող և մաքրող մեքենաներ, Գ) Յաւելուածք և Դ) Բացատրական բառարան—չայերէնից-չայերէն-Ռուսերէն-Գաղիերէն:

*Մ. Գալստիան - Լազարյան:*



Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

**Ք**իւղատնտեսական մեքենաները և գործիքները բաղկացած պէտք է լինեն պարզ և ամուր մասերից: Թաց փայտը, փխրուն երկաթը, չեչոտ չուգունը և կակուզ պողպատը շատ շուտով փշանում են և մեքենան անպէտք դարձնում:

Լաւ շինած և մասերը յարմար դասաւորուած մեքենան գործածելը արդիւնաւոր է լինում և երկար ծառայում միայն այն ժամանակ, երբ գործադրողը գիտէ իր գործը, երբ մեքենայի կտորած և վնասուած մասերը իսկոյն նորոգոււմ, իր ժամանակին իւղւում են և մաքուր պահւում:

Մեքենայ գնողը, եթէ չգիտէ նրա գործադրութեան եղանակը, լաւ կանէ, եթէ առաջ սովորի և

գնելու ժամանակ ընտրի ոչ թէ էժանագինը, այլ ընտիր նիւթերից և ամուր մասերից շինածը, թեթև բանողը և շատ արդիւնարեւողը:

Այն հողագործին, որն արդէն համոզուել է մեքենաներ գործածելու առաւելութեան մէջ և հաստատապէս չէ կարող որոշել, թէ ո՞ր մեքենան կամ դրա ո՞ր տեսակը իրան աւելի օգտաւէտ կարող է լինել, խորհուրդ կտանք այդ մասին խորհրդակցել ո՞չ թէ վաճառողների հետ, ինչպէս անում են շատերը, այլ այնպիսի կըլթուած գիւղատնտեսների հետ, որոնք հիմնաւորապէս ճանաչում են տեղական պահանջները և հողի յատկութիւնը: Միայն այս ձևով կարելի է անսխալ գնել հարկաւոր մեքենան և արդարացնել գիւղատնտեսական նորագոյն սիստեմի մեքենաների նպատակայարմարութիւնը: Նոյն իսկ կառավարութիւնը մեքենաներ գնելու գործը երկրագործներին գիւրացնելու համար՝ բաց է արել էժանագին և մատչելի վարկ, որի պայմանները դնում ենք այս գրքի վերջում, որ մեր գիւղացիներն էլ ծանօթանան պետական կարգադրութիւնների հետ և կարողանան նրանից օգտուել իրանց կեանքում:

Եթէ պատահում է բանեցնել հին մեքենաներ, հարկաւոր է գործադրութիւնից առաջ ուղղել նրանց վնասուած մասերը, մաքրել և ամրացնել խախտուած պտուտակները և այնուհետև միայն բանեցնել:

Մեծ մեքենաները հարկաւոր է ուղղաձիգով և հարթաշափով դնել նշանակուած տեղում և այնպէս

ամրացնել, որ չշարժուեն և միշտ ամուր մնան սարքած դիրքում:

Երբ բանում է մեքենան, անհրաժեշտ է որոշեալ ժամանակին իւղել առանցքակալները, պահել-պահպանել դրանց հողից, փոշուց և աղտոտուելուց, որ ձէթը չթանձրանայ և պնդանայ այդ տեղերում, չտաքանան այդ մասերը և չմաշուին — չփշանան: Մեքենաների համար գործածուող իւղերից ամենալաւն է ոսկորի իւղը, բայց թանկութեան պատճառով ձեռնատու չէ, իսկ ձիթապտղի և շիրբախտի ձէթերը նոյնպէս լաւ են և իրանց արժողութեամբ մատչելի գործածութեան համար:

Չատ անգամ երբ մեքենան գործածութեան մէջ չէ, թողնում են, ուր հասաւ վայր են գցում արևի և անձրևի տակ: Դա վնասակար է մեքենայի համար. պէտք է նրան իսկոյն մաքրել, փայտի կտորով քերել կպած հողերը և չորացած ձէթերը, նորից ներկել այն տեղերը, ուր ներկը գնացել է և ճրագուքսել այն մասերին, որոնք կարող են ժանգոտել: Եթէ մեքենան կորած պտուտակներ կամ կտորած մասեր ունի, հարկաւոր է այդ մասերն էլ նորոգել և ամեն բանով սարքած ու կարգած պատրաստ դրնել մի ապահով տեղ, տակը փայտ կամ տախտակ ձգած, որ մեքենայի մասերը գետնին չկպչեն ու չքվտեն և ժանգոտեն:



Հողի մշակութիւնը այնքան էլ հեշտ չէ, ինչպէս


կարծում են շատերը: Չատ են սխալում նրանք, որոնք հիւսիսային կողմերի կամ արտասահմանի հողի մշակութեան ձևերին ընտելանալով, առանց մեր երկիրն ուսումնասիրելու, որտեղ թէ հողը, թէ կլիման և թէ տնտեսական պայմանները բոլորովին ուրիշ են, մտցնում են երկրագործական այլ և այլ մեքենաներ և ձևեր և յիտոյ հանդիպելով անյաջողութիւնների ի դուր մեղադրում են մեքենաներն ու հողը, փոխանակ իրանց տգիտութիւնից առաջացած սխալը խոստովանելու:

Հողից հարկաւոր օգուտն ստանալու համար երկրագործական կարևոր մեքենաներ գործածելուց անկախ—կան այլ և այլ պայմաններ, որոնց գործադրել կամ չգործադրելը նոյնպէս ազդում է հողի արդիւնաբերութեան վրայ, ինչպէս՝ հողի պարարտացնելը դանազան սննդարար նիւթերով, միւսնոյն տեղում ցանելիք բոյսերի փոփոխումն (օրինակ՝ եթէ մի կամ երկու տարի ցորեն է ցանուել, միւս տարի մի այլ բոյս պէտք է ցանել) և այլն և այլն: Ահա այս ամենից էլ կախումն ունի հողի արդիւնաբերութիւնը, սակայն դա չէ մտնում այս գրքի ծրագրի մէջ: Այդ մասին կան տեղեկութիւններ պ. Մամուէլ Բալաղեանի գրած և Հայոց Հրատարակչական Ընկերութեան հրատարակած «Ջրոյցներ հողի մասին» օգտուէտ գրքոյկի մէջ: Բայց և այնպէս հողագործութեան մէջ ամենագլխաւորն է՝ հողը պատրաստել սերմն ընդունելու համար: Եթէ հողը պատրաստ է


այնպէս, ինչպէս հարկաւոր է, և ժամանակին ու կարգին վարել են ու փոցխել, այն ժամանակ ցանած սերմը մեղանում աւելի առատ բերք է տալիս, քան ուրիշ երկրներում, որտեղ առանց պարարտացնելու հողը կամ ոչինչ կամ շատ քիչ է տալիս: Ուրեմն մենք տնտեսական աւելի լաւ պայմանների մէջ ենք գընում: Իսկ եթէ սրա հետ միասին թողնենք մեր նախնական եղանակները և սկսենք նոր մեքենաներով ցանել, հնձել, կասել և խնամել բոյսը—այն ժամանակ բազմապատիկ կվարձատրուենք մեր կրած նեղութեան, վատնած ժամանակի և ծախսած փողերի համար:

Փորձը ցոյց է տուել, որ մեքենայով ցանելիս՝ աւելի քիչ սերմն է գնում, իսկ ստացւում է աւելի բերք: Ձեռքով ցանած ժամանակ մէկ տեղ շատ սերմ է ընկնում, իսկ միւս տեղ—քիչ, և այն կէտերում, ուր միատեղ շատ սերմեր են ընկնում, նրանք մէկը միւսին խեղդում են, որով արգելք են լինում բոյսերի ազատ ու կանոնաւոր աճելուն: Նոյնպէս հնձելու ժամանակ, երբ գերանդին սաստիկ դիպչում է բոյսին՝ թափւում և կորչում են հասկի միջի հասած սերմերը, որոնք յիտոյ թուշունների ու դաշտային մկների կերակուր են դառնում միայն: Հասկերը ձեռքով ժողովելիս միշտ մնում են ցիր ու ցան թափթփած հասկեր,—այդ երբէք չէ պատահում մեքենայով հաւաքելիս: Բացի այդ մեքենայով կասելիս հատիկը չէ փշանում և չէ կորչում:


Մեր այս պարզ և համառօտ համեմատու-  
թիւնից անգամ ընթերցողը կարող է համոզուել,  
որ երկրագործական նոր մեքենաները, թէկուզ  
թանկ ձեռք բերուած լինեն, կվերադարձնեն կարճ  
միջոցում երկրագործին իրանց արժողութիւնը և այդ-  
պիսով կդառնան նրա հաւատարիմ, ամենամօտ ու  
անհրաժեշտ ընկերը դաշտային աշխատանքի ժամա-  
նակ: Եւ ահա թէ ինչու այն երկրագործը, որ սկսել  
է մի անգամ նոր գործիքներով ու մեքենաներով կա-  
նոնաւորապէս բանել, այլ ևս չէ կամենում նրանցից  
բաժանուել և կրկին դիմել իր հին գործիքներին:



Հ Ե Ր Կ Ո Ղ Գ Ո Ր Թ Ի Ք Ն Ե Ր




**Ա**մենահին ժամանակներից սկսած մարդիկ մշակում են հողը սերմ ցանելու և հունձ ստանալու համար: Հողը փորփրելը, հողը հերկելը յայտնի է բոլոր ազգերի մէջ և դրա համար գործ են ածուել այլ և այլ գործիքներ՝ որոնք ժամանակի ընթացքում



Նկար 1. Նախնական գութան: հետզհետե կատարելագործուելով այժմ հարիւրաւոր տեսակների են հասել:

Որովհետև հողը բաղկացած է մի քանի տեսակ նիւթերից, գլխաւորապէս կաւից և աւաղից, որոնցից մէկը կարծր և դժուար փորւող է, իսկ միւսը կակուղ ու հեշտ, մէկում հարկաւոր է առը շուռ տալ ամբողջովին, միւսում ոչ, մէկը պահանջում է խոր մշակումն, միւսը՝ երեսանց և այլն, ուստի գութաններն էլ պէտք է իրանց կազմութեամբ համապատասխանեն հողի առանձնայատկութիւններին:


Այժմ հասկանալի է, թէ ինչու են գութանները լինում բազմատեսակ: Մի հանգամանք, որ շրփոթեցնում է անփորձ և անձեռնհաս անձանց: Ստո-



Նկար 2. Նոր ձևի գութան:

րև նկարագրելով գութանի իւրաքանչիւր մասն առանձին-առանձին՝ նպատակ ունինք դիւրացնել գութան ընտրողների գործը: Գութանի մասերին տալով զանազան ձևեր յարմարեցնում են այս կամ այն վարելահողի յատկութեանը: Եթէ հողը վարում են իր յատկութեանն անհամապատասխան կազմութիւն ունեցող գութանով, վերջինս փչանում է:

Գութանի (նկար 3-րդ և 4-րդ) մասերը սրանք են. *ձեւիչ* (գ)—որ կտրում է հողը խորութեամբ




Նկար 3. Գութանի մասերը:

182 - 20/13

(ուղղաձիգ), *խուփ* (ա)—որ կտրում է հողը տակից (տափակ). *թել* (բ)—որ շուռ է տալիս առը, *ատամ* (ո)—որ կանոնաւորում է գնացքը, *աղբի տախտակ* (նկարում չէ երևում, տես նկար 21 և 22)—որ պահպանում է գութանի ստորին մասերը աղբոտուելուց, *թուր* (է)—որի վերայ ամրացնում են *թևը*, *խոփը*, *ատամը* և *աղբի տախտակը*, *դեկ կամ էշ* (ե)—որի հետ միանում են գութանի բոլոր մասերը և որից լծում են անասունները, *մաճ* (զ)—որի միջոցով մաճկալը կառավարում է գութանի ընթացքը, *կշիռ*—(ըլթին և չկթ), որի միջոցով փոփոխում են առի հաստութիւնը և լայնութիւնը, *վերնախուփ* (դ)—յարմարեցրած լինելով խոփի առաջ կտրում է հողի երեսի կարծր շերտը, *առաջնաքար* (իլթ) պահում է դեկի ծայրը (գլուխը), *լծի սարք*




(նկարում չկայ), որի մէջ լծում են անասունները և այլն:



Նկար 4. Գութանի մասերը:


**ՁԵԻԶ.** Ձեւիչը (նկար 5) դանակի նման է և նշանակուած է վարելահողը ձեւելու—ուղղաձիգ կտրելու համար: Ուրբան ձեւիչը բարակ է, այնքան նա հեշտ է կտրում հողը: Ձեւիչները շինումեն պողպատից կամ երկաթից, ծայրը և բերանը մխում: Ձեւիչի կոթը (զ) երկաթէ կապի (աա) միջոցով այնպէս պէտք է կապուի դեկից (ե), որ ուղած ժամանակ կարելի լինի ձեւիչը բարձրացնել, ցածացնել, աջ ու ձախ թեքել և ծայրը (զ) մօտեցնել կամ հեռացնել դեկից:



Նկար 5. Ձեւիչ:


Եթէ ձեւիչի ծայրը (զ) կպած լինի խոփի ծայ-

րին, առը հեշտ կկտրուի, բայց գութանը, ինչպէս սովորաբար ասում են, «պար կգայ», այսինքն աջ ու ձախ կթեքուի: Այս անյարմարութեան առաջն առնելու համար ձեւիչի ծայրը հեռացնում են այնպէս, որ նա երկու մատնաշափ բարձրը լինի խոփի ծայրից, նոյնչափ էլ դէպի առաջ, մի փոքր էլ դէպի ձախ՝ որ նրա և խոփի ծայրի միջի հողը պոկ գայ և ոչ թէ կտրուի: Բայց եթէ այս դրութեամբ էլ գութանը կարծր հողում պար է գալիս, այն ժամանակ ձեւիչի ծայրը երկու մատնաշափ յետ են տանում խոփի ծայրից: Խոնաւ հողում ձեւիչի բերանը փոքր ինչ ձախ են թեքում, (այսինքն դէպի կտրուող հողը), որ ցեխ չկպչի և չդժուարացնի վարելը:



Նկար 6. Ձեւիչի կապը:

Այն ամենից կարելի է նկատել, որ ձեւիչը դեկի հետ զանազան անկիւններ է կազմում (նրկար 7), նայելով թէ ինչ տեսակ հող ենք վարում.



Նկար 7. Ձեւիչի ամրացնելու ձևը:

սակայն միշտ առջևից սուր (ա կամ գ), յետևից՝ բութ (բ կամ դ): Լաւ պինդ հողում բութ անկիւնը (բ) սուր անկիւնից (ա) պէտք է երեք անգամ մեծ լինի, բաւականին փա-

փուկ հողում բուժ անկիւնը (դ) սուր անկիւնից (դ) մէկ ու կէս միայն անգամ, իսկ միջակ կարծրութեան հողի մէջ անկիւնների յարաբերութիւնը պէտք է տարբերուի այս սահմանների մէջ:




Նկար 8. Ձևիչի գործը:

դէպքում ուղղահայեաց չպէտք է կապիլ ղեկի հետ:

**ԽՈՓ.** Խոփը ամենագլխաւոր մասն է գութանի, դրա նշանակութիւնն է կտրել հողը տակից և բարձրացնել թևի վրայ:

Նայելով հողի յատկութեանը՝ խոփերը լինում են լայն (նկար 9), նեղ (նկար 10) և միջին տեսակի (նկար 11): Առաջին, այսինքն, լայն տեսակները լինում են մեծ մասամբ շուգունից, որովհետև այդ ձևի խոփերը յատկացում են փափուկ և աւազոտ հողերի համար: Երկրորդ, այսինքն, նեղ տեսակները շինւում են պողպատից և գործադրւում



Նկար 9. Լայն խոփ:

Ձևիչը իր թեքութեամբ, բացի վարելը դիւրացնելուց, կատարում է և ուրիշ պաշտօն, այն է՝ հողի միջից դուրս է հանում բոյսերի արմատներ և մանր քարեր (նրկար 8), մինչդեռ ուղղահայեաց կամ յետ թեքած դրութեամբ ոչ միայն չի հանիլ՝ այլ աւելի դէպի խոր կմդի նրանց: Ուրեմն ձևիչը ոչ մի


են կաւեայ և դժուարավար հողերի համար: Իսկ միջին կարծրութեան հողերի համար խոփերը շինւում են կամ երկաթից կամ պողպատից կամ շուգունից:



Նկ. 10. Նեղ խոփ:


Հողի յատկութեանը պէտք է համապատասխանի և խոփի յետևի մասը. փափուկ հողի համար խոփի յետևը հաստ (բարձր) է լինում, կարծր կամ պինդ հողի համար՝ բարակ (ցածր)—որպէսզի խոփը հեշտ մասնի հողի մէջ և այլն:

Խոփը ամբացնւում կամ հագցնւում է ատամին, երբեմն էլ ուղղակի թրին: Խոփը ամբացնելու համար հարկաւոր է գործածել պտուտակներ (նկար 12) և ոչ քոռամեխ (նկար 13), որպէսզի նորոգելու կամ զօդելու ժամանակ դիւրութեամբ բաժանուին մասերը



Նկ. 11. միջ. խոփ:


իրարից: Լաւ է ամեն մի գութանի համար ունենալ երկերկու խոփ, որ զօդելու կամ նորոգելու ժամանակ մէկը միւսին փոխարինի:




Նկար. 12. Պտուտակ:

Ամենալաւ գութանն անգամ բանելուց յետոյ, խոփի և ձևիչի մաշուելով, սկսում է ծանրանալ և վատ վարել. որպէսզի կարելի լինի մաշուած մասերին իրենց նախկին դրութիւնը տալ, հարկաւոր է գութանը գնած ժամանակ խոփի և ձևիչի ձևը վեր առնել

Թիթեղով կամ Թղթով, որ զօդելու ժամանակ վարպետը աչքի առաջ ունենայ նրանց իսկական ձևը:




**Թեի.** Առը շուռ տալու կամ փըշ-  
րելու համար խոփի վերևը յարմարեցնում են Թեը (նկարներ 14 և 15): Թեի ձևը համապատասխան է լինում հողի յատկութեանը. նեղ և պտուտակաւոր Թեը (բ, նկար 14) ծառայում է պինդ հողի առը նոյնութեամբ շուռ տալու համար, որքան հողը փափուկին կամ աւաղոտին է մօտենում, այնքան Թեը լայնանում և կարճանում է, մինչև որ




Նկար 14. Պտուտակաձև Թե, ա—խոփ, բ—Թե:

բոլորովին փափուկ հողի համար փոխւում է գոգաւորի (բ, նկար 15), որը առը փշրելով է շուռ տալիս:



Նկար 15. Գոգաւոր Թե, ա—խոփ, բ—Թե:


Վերևն ստացինք, որ ձևիչի պաշտօնն է ձեղքել վարելահողը, իսկ խոփի պաշտօնը կտրել հողը տակից: Ուրեմն առը (ե, ե... տես նկար 16) կտրուած լինելով կողքից (զ) ձևիչով (բ), իսկ տակից (դ) խոփով (ա) բարձրանում է Թեի վրայ, որը և շուռ է տալիս նրան, ինչպէս պարզ երևում է




Նկար 16. Առի դարձնելը

նկարում: Եւ որպէս զի առը անարգել բարձրանայ և շուռ ընկնի, հարկաւոր է, որ խոփի և Թեի իրար կպչելու տեղը (նկար 17) կոր լինի (բ) և ոչ Թէ անկիւնաձև (ա):

**ԱՏԱՄ.** Ատամը լինում է առհասարակ շուգունից. մխում են միայն տակը և ձախ—չը վարած հողին քսուող—կողմը: Որովհետև վարելու ժամանակ գուլթանի բոլոր ծանրութիւնը ատամի վրայ է ընկնում, դրան առհասարակ շինում են պողպատից: Ատամի տակը փոքրը ինչ ներս է ընկած լինում (տես նկար 23), որպէս-




Նկար 17. Խոփը Թեի հետ միացնելու ձևը:



Նկար 18. Ատամ

զի դա բոլոր մասերով շքուրի գեսնին:

Քանի ատամը լայն լինի և երկար, այնքան լաւ է, թէպէտ աւելի լայնը և երկարը ծանրացնում է գուլթանի ընթացքը:




Նկար 20. Ատամը հաստութեան ուղղութեամբ կտրած:

Եւ ատամի երկարութիւնը լինում է առնուազն եօթ վերջօկ, իսկ լայնութիւնը ոչ պակաս մէկ վերջօկից:

**ԱՂԲԻ ՏԱԽՏԱԿ.** (Նկար 21 և 22):

Սրա պաշտօնն է նպաստել, որ գուլթանի յետի մասերը վարած հողով և պոկած բոյսերով շքլքցուեն և գուլթանի ընթացքը չծանրանայ: Փափուկ և փշրուող հողերը վարելու համար նշանակած դուլթաններին աւելացնում են և այս մասը: Եւ քանի բարձր լինի աղբի տախտակը, այնքան լաւ է:



Նկար 21. Աղբի տախտակ:




Նկար 22. Աղբի տախտակ:

Աղբի տախտակը կամ առանձին է լինում շինած և ամրացնում են թրի վրայ քոռամեխով կամ պտուտակներով, կամ թէ չէ


թրի կամ ատամի հետ ձուլուած կամ շինած է լինում անբաժան:

**ԹՈՒՐ.** Գուլթանի այն մասը, որի վրայ ամրացնում են թեր, խոփը, ատամը և աղբի տախտակը, կոչւում է թուր (նկար 23):



Նկար 23. Գուլթանի թուր:

Աւելի պարզ գուլթանների թուրը շատ անգամ ամփոփում է իր մէջ կամ այդ բոլոր մասերը (բացի խոփից) կամ մի որ և իցէ մասը: Թուրը շինում են փայտից, երկաթից, չուգունից կամ պողպատից, ինչ կարծիք այս վերջինը ամենալաւն է համարւում:




Նկար 24. Ղեկ:

**ՂԵԿ.** Ղեկը (գուլթանի էջը) լինում է փայտեայ (նկար 24), երկաթեայ և պողպատեայ: Որքան նա

երկար է շինած լինում, այնքան գութանի գնացքը ուղիղ է լինում:

Ղեկի տեսակներն էլ շատ են. ուղիղ, կոր, կամարած, պարկած «կ» տառի ձևով և այլն: Փայտեայ ղեկի կորույթիւնը, եթէ բնական չէ, գործածութեան համար ձեռնտու չէ, որովհետև շուտ է կորուսում:


Մէկ աղօսից միւսը տեղափոխելու դիւրութեան համար լաւ է, եթէ ղեկը անիւների առանցքի հետ ամրացրած չլինի (նկ. 26), այլ միացած շղթայով (նկ. 29):



Նկար 25. Մաճ:


**ՄԱՃ.** Վարելու ժամանակ գութանը աւելի հաստատ պահելու համար աղօսում, ղեկի յիտեի մասից յարմարեցնում են մի կամ երկու մաճ (նկար 25): Մաճկալը հետևելով գութանին՝ նրա դրած աղօսի միջովը կամ նրա ձախ կողքովը, պահպանում է մա-

ձերի միջոցով գութանի կանոնաւոր ընթացքը, թոյլ չտալով, որ նա թեքուի այս ու այն կողմը:



Նկար 26. Կշիռ և առաջնաքար:

**ԿՇԻՌ.** Առը լայն կամ նեղ, հաստ կամ բարակ վերցնելու համար ղեկի ծայրին յարմարեցնում են կշիռ (նկար 26 և 27): Կշիռները բազմատեսակ են լինում. նրանց ամեն մէկը այնպէս է յարմարեցրած, որ կարելի լինի ճամբարակի կարթը (է) բարձր կամ ցած, աջ կամ ձախ գցել: Առը լայն վեր առնելու համար, հարկաւոր է կշիռը թեքել դէպի աջ (գոյւրացնել Բ-ի մօտիկ, նկար 26) կամ կար-




Նկար 27. Կշիռ, ա—ձախ կողմը, բ—աջ կողմը, գ—վերի կողմը, դ—ներքի կողմը, ե—խցանը, զ—ղեկի գլուխը:

թը աջ գցել (բ-ից մօտ, տես նկար 27), իսկ նեղ վեր առնելու համար—ձախ թեքել: Առը հաստացնելու համար, այսինքն խոր վարելու համար, հարկաւոր է բարձրացնել կշիռը (մօտեցնել դ-ին, նկար 27) կամ կարթը բարձր գցել (մօտիկ դ-ին, նկար 26):

**ԱՌԱՋՆԱՔԱՐՇ.**

Մինչև այստեղ նկարագրած մասերով լրանում է պարզ գուլթանը: Այսպիսի գուլթանը թեթև է բանում, բայց կառավարելը հմտութիւն է պահանջում մաճկալից:




Նկար 28. Առաջնաքարշ ընդհանուր տեսակի:

Որպէս զի գուլթանի կառավարելը հեշտանայ ամեն մի բանեցնողի համար՝ գուլթանին աւելացնում են և մի առանձին մաս—երկու անհաւասար

անիւններ, որոնց առանցքների վերայ դրում է դեկի ծայրը: Գուլթանի այս մասը առաջնաքարշ է կոչւում (նկար 28 և 29):

Երկու ականի առաջնաքարշերը այնպէս են յարմարեցրած, որ նպաստում են գետնի խոր կամ երեսանց վարելուն: Յարմարեցնելու ձևերը բազմատեսակ են, զբանց բոլորի նպատակն է՝ դեկի ծայրը աւելի կամ պակաս բարձրացնել հողի մակերեսից: Ղեկի ծայրը բարձր եղած ժամանակ՝ գուլթանը երես է վարում, նշանակում է դեկը կարճանալով երեսանց է վարում, երկարանալով—խոր: Այսպէս առաջնաքարշ գուլթաններում կշիռի պաշտօնը երկու մասի է բաժանուած: Խոր կամ երեսանց վարել տալու պաշտօնը կատարում

է առաջնաքարշի շղթան (ա), որով կարելի է դեկի ծայրը բարձրացնել կամ ցածացնել: Առը լայնացնելու կամ նեղացնելու համար առաջնաքարշի առջևից




Նկար 29. Գուլթանի առաջնաքարշ:

միացած է կիսադեղնաձև մի ուրիշ մաս (բ), որի հետ վարում են այնպէս, ինչպէս և կշիռի հետ: Խորթ ու բորդ տեղերում առաջնաքարշը անյարմար է գործածել այն պատճառով,

որ գուլթանը միատեսակ չէ վարում. խոփի քիթը երբեմն դուրս է գալիս հողից, երբեմն աւելի խորասուզւում է հողի մէջ:

**ՎԵՐՆԱԽՈՓ.**

Կարծր հողերի վարելը հեշտացնելու կամ աւելի խոր վարելու համար շատ անգամ դեկից—ձևիչի առաջ ամրացնում են մէկ ուրիշ փոքրիկ խոփ իր թևով (նկար 30 և 31), որը կոչւում է վերնախոփ: Սա վերցնում է երեսի շերտը և քցում ահօսի մէջ, նրանից յետոյ մայր խոփը կտրում է տակի շերտը և այդ առով ծածկում վերնախոփի կտրածը:




Նկ. 30. Վերնախոփ (առանձին):

Վերնախոփը պէտք է կտրէ հողը այն լայնութեամբ, ինչ լայնութեամբ գուլթանի խոփն է կտրում,


այն ինչ մեծ մասամբ վերնախօփը նեղ է լինում և նա նեղ կտրելով շատ չէ թեթևացնում մայր խոփի գործը, ուրեմն և գուժանի ընթացքը:

**ԳՈՒԹԱՆԻ ԼԹԻ ՍԱՐՔԸ.** Գուժանի ծանրութիւնը լծած անասունների մէջ հաւասարապէս բաժանելու համար հնարուած են զանազան լծասարքեր, որոնք երկու գլխաւոր տեսակի են բաժանուում. առաջին տեսակը որ նոր է և մուտ չէ գործել մեր երկիրը, եզի ճակատից են լծում (նկար 32), երկրորդը՝ պարանոցից (նկար 33 և 34): Մենք կնկարագրենք այս վերջի տեսակներից այն, որ առ այժմ լաւագոյնն է համարւում, դա Գրոսսուլ-Տօլտոյի հնարածն է:



Նկար 32. Ճակատի լուծ:

Այս լծասարքը այնպէս է յարմարեցրած, որ առաջի լուծերը քաշելիս իրանց շղթաներով չեն սեղմում ու ցաւեցնում յետագայ լուծերի ուսերը և չեն




Նկար 31. Վերնախօփ (դեկի վերայ ամրացրած):

ԳՈՒԹԱՆԻ ԼԹԻ ՍԱՐՔԸ




Նկար 33. Գուժանի լծի սարքը կողքից (ծի սարքը պարզ անձեղու համար նկարուած են միայն ձախ կողմի եզները):



Նկար 34. Գուժանի լծի սարքը վերեկից:

դանդաղեցնում գուլթանի գնացքը, ինչպէս մեր տեղական լուծերն են անում, միևնոյն ժամանակը հինգ լուծ անասունի գործը կատարում են չորս լուծով, և աւելի հեշտ են վարում քան թէ հինգ լուծ եղը. այդպիսով եօթ լծի ոյժը համապատասխան է տաս լուծի ոյժին: Նմանապէս հօտաղները սամինների թեքուելուց իմանում են, թէ որ լուծը չէ քաշում, և ծոյլ անասունները առանց հօտաղների քշելուն էլ կամաց-կամաց սովորում են ուղիղ քաշելը, որովհետև շղթան թուլանալիս լծի սամինները ցաւեցնում են կենդանիների վզերը:



Նկար 35. Հաւասարակշռող լծակ (բաժանած 4 մասի):

Հաւասարակշռող լծակի (գ) մէջ տեղից, № 3 լուծի հաւա-

\*) Լծի սարքը պարզ տեսնելու համար նկարուած են միայն ձախ կողմի եղները:

Սյստեղ յարմար ենք համարում աւելի մանրամասն նկարագրել այս լծի սարքը: Վերջին լուծը (նկար 33 և 34), ինչպէս առաջին գնացողն՝ նշանակենք № 1, սրան հետևող լուծը—№ 2 և այսպէս մինչև առաջի լուծը, որի շղթան անմիջապէս գուլթանի ղեկիցն է միացւում: Այսպէս № 1-ի շղթան (նրկար 33\*) ձգւում է արդէն ընդունուած ձևով № 1 եղների լուծի (ա) օղակից (փոկից), № 2 շղթան № 2 լուծից կախած հա-

սարակշռող լծակը (գ) բաժանուած է երեք մասի և նրա շղթան ձգւում է լծակի առաջի և երկրորդ մասի արանքից (հաշուելով ներքևից), № 4 լուծի հաւասարակշռող լծակը (ե) բաժանուած է չորս մասի (տես նկար 35) և շղթան (№ 4) ձգւում է նոյնպէս առաջին և երկրորդ մասի արանքից (0-ից, նկ. 35), հաշուելով ներքևից և այդպէս շարունակելով մինչև առաջի, այսինքն գուլթանի մօտի լուծը, ՚ինկատի առնելով որ հաւասարակշռող լծակները այնպէս լինեն կապուած լծերից, որ նրանց երկար կողմերը (և օ, նկ. 35) լինեն վերև, իսկ կարճ կողմերը (օ ֆ)—ներքև: Հաշուելով № 1 լծից, ամեն մէկի լծակը բաժանուած է այնքան մասի, որքան անգամ մեր դրած համարների կարգով բռնում է լուծը և նրա շղթան ձգւում են 0-ից, այնպէս որ երկար մասը (և օ) լինի վերև—կապած լծից, իսկ կարճ մասը (օ ֆ) ներքև,—որից (ֆ) կապում են դրա առաջին գնացող լծի շղթան:

Յոյց տալով մեր դարբիններին հաւասարակշռող լծակի նկարը, կարելի է նրան շինել տալ և մեղանում այնպիսի տափակ երկաթից, որի հաստութիւնն է մօտաւորապէս քառորդ վերջօկ և լայնութիւնն է մէկ կամ մէկուկէս վերջօկ: Այդ լծակի ներքի ծակը (ֆ) առհասարակ առաջ է տարած յարմարութեան համար:


Եւ որովհետև նոյն իսկ մի գուլթանի լուծքի բոլոր հաւասարակշռող լծակները միմեանց հաւասար չեն և աստիճանաբար մեծանում են, այս պատճառով այստեղ նշանակում ենք մի համեմատական չափի աղիւսակ:

1-ջի լուծը հակաքարչի հարկաւորութիւն չունի:	
2-դ լուծի հակաքարչի երկարութիւնն է 7 վերջօկ:	
3-դ « « « 9 «	
4-դ « « « 12 «	
5-դ « « « 13½ «	
6-դ « « « 15 «	
7-դ « « « 17 «	



Նկար 36. Փայտեայ լծակայմ:


Ջղթայի տեղ կարելի է գործ ածել և փայտեայ լծակայմ ա (նկար 36), դրա ծայրերին մի քանի օղ ունեցող շղթայ են ամրացնում, իրանց կարթերով (բ, գ), ինչպէս ցոյց է տուած նկարում:



Նկար 37. Երկու լուծի լծասարք: (Նկարած են միայն ձախ կողմի եղները:)


Եթէ միայն երկու լուծ է լծուում գութանին կամ մի այլ գործիքի (նկար 37), այն ժամանակ յարմար է համարուում երկու լուծի շղթաներն էլ, ինչպէս ցոյց է տուած նկարում, միացնել գութանից և ոչ թէ

երկրորդի շղթան առաջինի լծի հետ, ինչպէս ընդունուած է մեզանում:




Նկար 38. Երկու խոփանի գութան:

**ԲԱԶՄԱՆՈՓ ԳՈՒԹԱՆ.** Երկու (նկար 38) կամ երեք (նկար 39) գութան ամրացնում են մէկ դեկի կամ շրջանակի վրայ իրանց բոլոր մասերով միանգամից առը լայն վեր առնելու համար, որ կարճ ժամանակում և համեմատաբար քիչ անասուններով աւելի մեծ տարածութիւն վարեն: Միացրած գութանները կազմում են այդպիսով մի մեծ գութան շատ խոփերով:



Նկար 39. Երեք խոփանի գութան: Այս տեսակ գութանները գործադրուում են մեծ


յաջողութեամբ այնպիսի տեղերում, որտեղ աւելի խոր վարելու հարկաւորութիւն չկայ: Սրանք յարմար են և գութանի վարը խաշմերուկ կրկնավարելու համար և այլն: Սրանք ունեն և այն աչքի ընկնող յարմարութիւնները, որ հարթ տեղերում մաճկալի կարիք չունեն, որովհետև մի անգամ սկսած չափով և խորութեամբ վարում են անարգել: Այս գութանները առ-



Նկար 40. Առանձին լծակ, որի միջոցով բարձրացնում են բազմախոփ գութանների անիւները:

հասարակ ունենում են ակօսից հանելու յարմարութիւն (նկար 40), այդ կատարւում է կամ դեկը իր վրայ ամրացրած մասերով շուռ տալով կամ մի առանձին լծակի միջոցով (դճ—տես նկար 4) որը միացրած է լինում առհասարակ անիւների (խծ) առանցքի (յ) հետ: Եթէ գութանը չունի այս յարմարութիւնը և ինքն էլ ծանր է, այդ դէպքում շատ ժամանակ է կորչում՝ երբ գութանը ակօսից ակօս են փոխադրում:


**ԵՐԿԹԵԱՆԻ ԳՈՒԹԱՆ.** Սովորական գութանի կազմութիւնն այնպէս է, որ առը միայն մի կողմն է շուռ տալիս, այն-



Նկար 41. Երկթեանի գութան:


պէս որ մի ակօս լրացնելուց յետոյ պէտք է անգործ վերադառնալ մինչև առաջուայ տեղը և յետոյ նորից վարել: Իսկ եթէ չեն ուզում անգործ թողնել գութանը, ստիպուած են լինում հողի ծայրից պտոյտ տալ և միւս ամից զուգահեռական նոր ակօս բաց անել: Այդ դէպքում սակայն վարը վերջանում է հողի մէջ տեղում կամ թէ հողի մէջ տեղից սկսելով՝ զուգահեռական ակօսներ են բաց անում և ամբերում վերջացնում:

Այս եղանակով և մի կողմանի գութանով շատ դժուար է սարի լանջը վարելը: Այս դէպքում գործ են ածում այլ տեսակ գութան, որը յարմարութիւն



Նկար 42. Երկթեանի գութան՝ միացրած թեկերով:


ունի լրացրած ակօսի կողքով յետ վերադառնալ և մի ուղղութեամբ առը շուռ տալ: Այսպիսի գութանով հողի վարը սկսում են սարի ստորին կողմերից և վերին մասերում վերջացնում: Այս տեսակ գութանները, որ նոյնպէս բազմատեսակ են, կոչւում են ընդհանուր անուամբ՝ երկթեանի գութաններ:



Նկար 43. Չուխ կամ արօր:

**ՉՈՒԹ** կամ **ԱՐՕՐ**. Արօրը նոյն գուլթանն է, միայն բոլորովին հասարակ և փոքր ձևով: Նրան գործ են ածում մեծ մասամբ երեսանց և նեղ վարելու համար, այնպիսի տեղերում, որտեղ գուլթան բանեցնելը անյարմար է կամ բանեցնում են այն զիւղացիները, որոնց համար գուլթանը թանգ գործիք է:

Արօրը (նկար 43) բաղկացած է լինում խոփից, թրից և դեկից: Նոր ձևի և էփանագին գուլթանների տարածուելը հեազհետէ վերացնում է արօրի գործածութիւնը, որովհետև սրանք գործնական տեսակէտից շատ անարգիւնաբեր են և անկատար:



Գուլթանի ամենահասարակ տեսակը—չուխը, փորփորում է միայն հողը, այն էլ երեսանց, իսկ հողը կատարելապէս վարելու համար հարկաւոր է գործադրել գուլթան և այնպիսին, որի բոլոր մասերը համապատասխան են մէկգմէկու և այն հողին, որի վարելու համար նշանակուած է:



Նկար 44. Վարելու ձևը:

Վարելու ժամանակ պէտք է առաջին ափսուսը (նկար 44) երեսանց՝ մի երեք-չորս մաւի խորութեամբ՝ վարել (№№ 1 և 1), երկրորդ ափսուսը (№№ 2, 2) խորութիւնը աւելցնել և միայն երրորդիցն (№№ 3, 3, 4, 4 և այլն) սկսել վարել այն խորութեամբ, ինչ խորութեամբ որ կարգն է: Սա անհրաժեշտ է որպէսզի մի անգամից գուլթանին սաստիկ զօռ չհասնի


և նրա թոյլ մասերը չկտրելեն: Այս նպատակով հարկաւոր է առաջին ակօսումը կամ կարթը (է, նկար 26) ցած գցել կամ կշիռը (ար, նկար 27) ցածացնել, մաճերն էլ սեղմել փոքր ինչ դէպի ցած, երկրորդ ակօսներումն բարձրացնել կշիռը կամ կարթը բարձր գըցել, իսկ երրորդ ակօսից սկսած՝ բարձրացնել կշիռը կամ կարթը գցել իրենց համապատասխան տեղը և մաճերը թոյլ թողնել կամ բարձր պահել: Եթէ գութանի խորութիւնը կանոնաւորում է առաջնաքարչի միջոցով այն ժամանակ ի նկատի առնել այն, ինչ որ ասացինք առաջնաքարչի համար (երես 28):

Կարելի է միևնոյն ժամանակը և աստիճանաբար լայնացնել առը. առաջի ակօսներում կարթը ձախ դէպի ա գցել (նկար 27) կամ կշիռը գդ—գդ (նկար 26) տանել դէպի ձախ և ձախ մաճը աւելի սեղմել: Երկրորդ ակօսում կարթը աջ գցել կամ կշիռը տանել դէպի աջ և կանոնաւորել երրորդումը:

Կաւային, կարծր և վնասակար բոյսերով ծածկուած հողերում վարը պէտք է կատարելապէս շուռ տալ, և աշխատել այնպէս համեմատեցնել առի լայնութիւնը և հաստութիւնը, որ ցելի երեսը լինի ոչ թէ հարթ՝ այլ թոււր-թոււր, ալիքանման, որպէս զի աւելի շատ մասեր լինեն օդի և քամու ներգործութեան տակ:




Որովհետև մեր կողմերում առի լայնութիւնը\*) շատ անգամ ընդունում են վարի խորութեան փոխարէն, այդ պատճառով այստեղ նկարագրում ենք առի խորութեան չափելու ձևը: Ակօսի մէջ թափած հողը պէտք է մաքրել, յետոյ վերցնել մի տախտակ կամ փայտ, դնել նրան չվարած հողի երեսին, այնպէս որ մի ծայրը դուրս գայ ակօսի վերայ և արշինով չափել ակօսի յատակից մինչև փայտի տակը, դա կլինի վարի խորութիւնը, որ մեր նկարում  $4\frac{1}{2}$  վերջօկի է հաւասար:



Նկար 45. Վարի խորութեան չափելու ձևը:


\*) Առի լայնութիւնը իմանալու համար չափում են մեծ անիւից մինչև ձևիչը: Չափել հարկաւոր է ուղղահայեաց դեկին:

# ՕՃԱՆԴԱԿ ԳՈՐԾԻՔՆԵՐ



**Մ**իայն գու-  
թանով վարելը  
չէ կարող բաւականացնել հողագործին: Նա աշխատում  
է շարունակել ուրիշ գործիքներով ևս մշակել հողը, և  
բաժանել իրարից հողի մասերը, որպէսզի հեշտու-  
թեամբ տաքանայ հողի ներսը և ազատ ճանապարհ  
բացուի օդի ու ջրի համար: Միևնոյն ժամանակ հո-  
ղը կակղելով և փուխը դառնալով, մեծ տարա-  
ծուլիւն է տալիս արմատներին աճելու և արդիւնա-

բեր լինելու համար: Այս հետևանքներին հասնում են  
ուրիշ գործիքների միջոցով, որոնք և կոչւում են  
օժանդակ գործիքներ:




Նկար 46. Ներքնավար:

**ՆԵՐՔՆԱՎԱՐ.** Բոյսի յաջող աճելուն համար ան-  
հրաժեշտ է, որ արմատները դէմ չընկնեն կարծր հո-  
ղին: Այս նպատակով գործ են ածում Ներքնավար  
կոչուած արօրը (նկար 46), որ ունի բացի թևից գու-  
թանի բոլոր մասերը և իբրև անկախ գուլթան, առան-



Նկար 47. Ներքնավարի գործը գուլթանի յետևից:

ձին լծած, գնում է նրա յետևից նրա փորած ալօ-  
սով (նկար 47) և աւելի խորացնում է վարը, մշակե-  
լով բացուած ալօսի ներքին շերտը, առանց երես  
հանելու փորած հողը:




Նկար 48. Բազմախոփ արօր:

**ԲԱԶՄԱԽՈՓ ԱՐՕՐ.** Հողը հարկաւոր խորութեամբ վարելուց յետոյ մնում է փխրացնել այդ վարածը դարձեալ որոշ խորութեամբ: Այս նպատակով գութանի վարածը կրկին—առանց շուռ տալու հողը— վարում են *բազմախոփ* կոչուած արօրով\*): Այս գործիքը (նկար 48) առհասարակ կազմուած է լինում երեքից մինչև ինն խոփիկներից (ա, ա... նկար 50) հազցրած առանձին-առանձին թրերի վրայ և ամրացրած շրջանակի մէջ հաստատուած զուգահեռական



\*) Բազմախոփ արօրը կարելի է գործածել նոյնպէս՝ ա) իրրև քաղհան, բ) կոշտեր մանրացնելու և գ) ցելի վրայ ցանած սերմերը ծածկելու համար: Վերջին դէպքում աւելի յարմար է, որ խոփիկները ծայրերը սուր և նեղ լինեն, իսկ յետևը լայն կամ թևաւոր (նկար 49):


Նկար 49. Բազմախոփ արօրի խոփիկներ:



Նկար 50. Բազմախոփ արօր (վերեկից):

են վարի խորութիւնը: Այս լծակի միջոցով ևս խոփիկները հողի մակերևոյթից բարձրանում են ակօսից հանելու կամ տուն տանելու համար:

Որքան հողի մակերևոյթը հարթ և կոկ է, այնքան շատ կարող է լինել խոփիկների քանակութիւնը, միայն ոչ աւելի իննից և ոչ պակաս երեքից-հարթ և կոկ տարածութեան վրայ բոլոր խոփիկները գործ կկատարեն, իսկ անհարթ տարածութեան վրայ՝ մի քանիսը միայն:



Նկար 51. Տափան:


**ՏԱՓԱՆ.** Յերը փոփկացնելու և երեսը հաւա-

ձողերեց (գ, գ): Այս խոփիկները, իրրև անկախ արօրներ, այնպէս են յարմարացրած, որ հողը փորելիս ամեն մէկը առանձին ակօս է բաց անում հաւասար հեռաւորութեամբ (բ, բ...):

Բազմախոփ արօրը ունենում է առհասարակ մէկ, երկու, երեք կամ շորս անիւ, որոնց միջոցով և լծակի օգնութեամբ կանոնաւորում

սարեցնելու համար գործ են ածում նոյնպէս և տափան (նկար 51) գործիքը\*):


Ամենայրմար պէտք է համարել այն տափանները, որոնց ատամները հաստատուած են մանր հորիզոնական և շարժուն ձողիկներէ վրայ, որպէսզի անհաւասար մակերևոյթի վրայ բոլոր ատամներն էլ գործ տեսնեն: Կան և բազմատեսակ ուրիշ տափաններ, որոնց ձողերը միմեանց հետ միացրած են և անշարժ են, որոնք յարմար են միայն հարթ տեղերի համար:



Տափանի ատամները (նկար 52) սրածայր են և դէպի առաջ թեքուած, որ հեշտ մտնեն հողի մէջ և հողը մաքրեն բոյսերից

և արմատներից (տես ևս գութանի ձևիչի գործը երես 20, նկար 8):

Քարքարոտ կամ արմատներով լի տեղե-




Նկար 53. Զսպանակաւոր տափան:

\*) Եթէ երկրագործը սերմը ծածկելու համար չունի համապատասխան գործիք (որի նկարագրութիւնը հետևեալ 2-րդ մասումն կտանք) կարող է բաւականապէս և տափանով: Տափանը միևնոյն ժամանակ ծառայում է և իբրև հողը պարարտացնելու գործիք, խառնելով հողի հետ գանազան նիւթեր:


րում յարմար է գործ դնել զսպանակաւոր տափան (նկար 53), որի ատամները բացվում են քարի կամ մի որ և իցէ արգելքների հանդիպելիս և չեն կտորուտ կամ փշանում:

Աւելորդ չենք համարում յիշել և այն, որ աշնան վարը զարունքին տափանելը շատ նպատակայարմար է համարում, որովհետև հողի մէջ գտնուած աւելորդ արմատները և մինչև այդ ժամանակ բուսած խոտերը տափանի միջոցով դուրս են հանում և ոչնչանում: Օգտակար է տափանել և խոտատեղերը, մանաւանդ որտեղ բուսում են զանազան տեսակ մամուռներ և անպէտք բոյսեր: Այսպիսի տեղերը տափանելով կարելի է հեռացնել շրանց երեսից՝ բոյսերի արմատների ազատ աննդառութեան արգելքներ և այդպիսով նպաստել մաքուր խոտի ազատ ուլա աճելուն:



ՆԵ. Արօտատեղերում առատ խոտ ստանալու համար երբեմն վարում են այդ տեղերը և ցանում են առաջի անգամը կտաւահատ, իսկ երկրորդ տարին խրփուկ՝ մի որ և իցէ խոտաբոյսի հետ: Երրորդ տարուց՝ յետոյ այսպիսի տեղերում առատ խոտ է հնձում (Департаментъ Земледѣлія):

**ՀԱՐԹԻՉ ԳՈՐԾԻՔ.** Չատ անգամ գիւղատնտեսները չեն բաւականանում ներքնավարով, բազմախոփ արօրով կամ տավանով, այլ սրանցից յետոյ վարած



Նկար 54. Հարթիչ գործիք:

հողի երեսը հարթում են հարթիչով (նկար 54) այն նպատակով, որ արմատապտուղ բոյսերը լաւ աճեն գետնի տակ: Այս մեքենայով ծածկում են կամ աւելի ուղիղ է ասել՝ մտցնում են հողի մէջ նմանապէս և ցանելուց յետոյ սերմերը որ քամին շտանի և թռչունները չուտեն նրանց\*):

\*) Միայն գարիի և խրփուկի համար պատրաստած հողի երեսը չէ կարելի հարթել հարթիչով («Сельский Хозяин»):




**Մ** ենք նկարագրեցինք կարելիին չափ համառօտութեամբ և պարզութեամբ ամենաանհրաժեշտ և ամենատարածուած այն գործիքները, որոնք հողը նախապատրաստում են սերմ ցանելու համար, բայց թող չկարծուի թէ սրանցով վերջանում են երկրագործական գործիքների տեսակները,— ո՛չ, երկրագործական գործիքները բազմաթիւ և բազմատեսակ են: Բայց մեր գործը իբրև նորութիւն, իբրև փորձ առաջնորդելու հայ երկրագործին և գիւղացուն, սահմանափակում ենք ամենաանհրաժեշտներով, զգուշանալով մանրամասնութիւններից, որպէսզի չզփոթեցնենք հայ երկրագործին և նա ձեռք բերի սկզբում այն գործիքները, որոնց գործածութիւնը հեշտ է: Այդպիսով նա կթողնի իր նահապետական անպէտք դարձած հին գործիքները, թափ կտայ իրանից հնութեան փոշին, կզիմի նորագոյն գիտութեանը և ձեռք

կրերի կատարելագործուած գործիքներ, չվախենալով սրանց առերևոյթ թանգութիւնից, որովհետև կարճ միջոցում սրանք իրանց գինը մեծ տոկոսով յետ կվերադարձնեն: Յանկալի է, որ գիւղացին ունենայ հողի նախապատրաստելուն վերաբերեալ անհրաժեշտ բոլոր գործիքները, մէկը միւսով չփոխարինի, *ԵՕԼԱ* չգնայ, որովհետև քիչ չեն օրինակներ, երբ երկրագործը անտեսութեան անունով բաւականացել է մի կամ մի քանի գլխաւոր գործիքներով, իր կարծիքով երկրորդական համարուածները ձեռք չէ բերել, ասելով թէ «ծախսս շատանում է», և մի գործիք մի քանի ուրիշի տեղ գործածելով՝ սպասած արդիւնքը չէ ստացել, իսկ գործիքը նոյն իսկ իր ծախսը չհանած՝ վնասուել, անպէտքացել է: Ահա այսպիսի հանգամանքներն անհաշիւ անտեսութիւն են, որով կոտարում է երկրագործական նոր սխտեմի գործիքների *անունը*, և ընդհակառակը ամուր պահում հնի գործածութիւնը:

Քաւական չէ գնել, ձեռք բերել լաւ գործիքներ. անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց բոլոր մասերի գործը, յարմարութիւնը և պահպանութիւնը: Անհրաժեշտ է իմանալ թէ՛ սրտեղ և ի՛նչպէս պէտք է խոր կամ երես վարել, ի՛նչպէս և ի՛նչով մաքրել հողը թէ՛ երեսի և թէ՛ ներսի աւելորդ և վնասակար բոյսերից և արմատներից, ի՛նչպէս և ի՛նչով փափկացնել հողը սերմի, օդի և ջրի մուտքը հողի մէջ ընդունակ դարձնելու համար: Եւ պէտք է գնել ո՛չ թէ անպատճառ գեղեցիկը կամ էժանը, այլ այն, որը հա-

մապատասխան է հողի յատկութեանը, ապա թէ հողից պահանջել և սպասել ցանկալի արդիւնք: Իսկ այս ամեն հանգամանքները և պայմանները բացատրուած են իրանց տեղերում թէև համառօտ՝ սակայն բաւականաչափ հասկանալի ուշադիր ընթերցողի համար:




Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.



**ՅԱՆՈՂ, ՀՆՉՈՂ, ԿԱՍՈՂ ԵՒ ՔԱՄՈՂ,  
ՄԵՔԵՆԱՆԵՐ:**






**Ե**րբ հողը վարած և տափանած է, նա արդէն պատրաստ է ցանելու համար, և սերմանողը՝ իր գոգնոցը լցրած սերմով՝ շրջում է ցելի վրայ, ձեռքով ցրուելով սերմը: Ինչքան էլ վարժ լինի սերմանողի ձեռքը, այնուամենայնիւ նա չէ կարող համահաւասար ցրուել հողի երեսին սերմի հատիկները: Այն կողմում, որտեղից ձեռքը սկսում է ցրուել, սերմ շատ է թափւում, իսկ միւս կողմում և առջևից միշտ նօսը: Իսկ որտեղ շատ է թափած սերմը, այնտեղ հատիկները միմեանց խեղդում են, և մի քանի հատիկից միայն մէկն է աճում, իսկ եթէ շատերն են բարձրանում ու հասնում՝ հասկերը և հատիկները աւելի վտիտ են լինում, քան այն սերմերինը, որոնց հատիկները իրարից հեռու են ընկած լինում:

Բայց ցանկալի է և հարկաւոր է, որ ցանած սերմերը համահաւասար կերպով աճեն, միատեսակ խիտ կամ նօսը լինեն, բոլորը մի խորութեան հողի մէջ, որ արտի տեսքը, բարձրութիւնը, ուրեմն և բերքը, միատեսակ լաւ և յաջողակ լինեն: Մեքենայով ցանելու ժամանակ հատիկները համահաւասար կերպով են

Թափուում հողի վրայ, — այդպիսով հատիկները իրար չեն խեղդում, և ամեն մէկը, իր շուրջը բաւականին ազատ հող ունենալով, կարողանում է յաջողակ աճել, և տալիս է լաւ հասկ՝ լի միատեսակ հատիկներով: Եթէ մեքենայով ցանածը համեմատենք ձեռքով ցանածի հետ, կը տեսնենք, որ սերմը 10-ից մինչև 15% պակաս կը գնայ, և բերքն էլ աւելի առատ կլինի:

Սերմնացանները լինում են երեք տեսակ՝ ա) հատիկները համաչափ ցրուող, բ) հատիկները գետնի մէջ հատ-հատ նստեցնող և գ) հատիկները շարքով ցանող: Այս երեք տեսակից էլ լինում են թէ ձեռքի և թէ ձիու:


**ՁԵՌՔԻ ՍԵՐՄՆԱՅԱՆ.** — Ձեռքի սերմնացանը արդէն այնքան դիրացնում է գործը, որ ձեռքից աւելի համահաւասար և երկու անգամ էլ արագ է ցանում: Ձեռքի սերմնացանը լինում է կամ հատիկները ցրուող կամ հատիկները շարքով ցանող: Առաջինը այնպէս է յարմարեցրած, որ մարդ գործիքը կախում է ուսից, և այդպէս առաջ գնալով ցանում, իսկ երկրորդը հաստատուած է ակների վրայ և մարդ ման ածելով շարժելով նրան ցանում է:



Նկար 55. Ձեռքի սերմնացան (աղեղնաւոր):

Մեր յիշած սերմնացաններից առաջին տեսակը տես նկար 55. ցանողը կախում է նրան ուսից, լքցնում է սերմով և ցելի մէջ հանդարտ քայլերով մի ձեռքով մեքե-

նան է բռնում, իսկ միւս ձեռքով նրա տակի աղեղն (ա ա) և առանց արագացնելու կամ դանդաղեցնելու յետ ու առաջ տանելով հատիկները, միատեսակ ցրել է տալիս գետնի երեսին 10—12 արշին տարածութեամբ: Այդ տեսակ սերմնացանները շատ աժան են լինում ու թեթեւ:




Նկար 56. Ձեռքի սերմնացան (անիւներով):

Միւս տեսակը (նկար 56), սարքած երկու ական վրայ, գործադրում է ինչպէս ցելերում, նոյնպէս մեծատարած բոստաններում: Առաջից շինած խոփիկը փորում է հողը. երկու ական միջի թմբուկում լցրած սերմը թափուում է այդ ակօսի մէջ, ականը խոփիկի աջ ու ձախ մղած հողը կրկին լքցնում են ակօսը. այդպիսով ծածկելով ցանած սերմը, իսկ յետին կողմից շինած հարթիչը հաւասարեցնում է հողը. և այդպէս շարունակաբար: Որպէսզի շարքերը մէկը միւսի

հետ համաչափ դուգահեռական դուրս գան, լաւ կլի-  
նի, որ առաջին շարքը ցանելիս՝ լար քաշուի և դորա  
ուղղութեամբ տանուի մեքենան, այն ժամանակ միւս  
շարքերը ևս դորա համեմատ դուգահեռական կդուրս  
գան, որովհետև ինքն մեքենան ունի դորա համար  
յարմարեցրած մի գծիչ, որը ցանելու միջոցին նշա-  
նում է և միւս ակօսի տեղը: Եթէ համեմատենք այս  
սերմնացանով ցանելը ձեռքով ցանելու հետ, կտես-  
նենք, որ նա թեթեւացնում է ցանողի աշխատանքը,  
տնտեսում է ժամանակը և կրկնապատկում արդիւնքը:


Սրանով ցանում են ցորեն, գարի, խրփուկ,  
ծխախոտ, խաշխաշ, լօբի, բակլա, վարունկ, ձմերուկ,  
բողկ և այլն:

**ՅՐՈՒՈՂ ՍԵՐՄՆԱՑԱՆ.** (ձիով բանող): Մէկ ձի  
լծած, սերմնացան գործիքով ցանում են օրական  
մինչև 15 օրավար տեղ: Այդ սերմնացանները ունեն  
սերմի համար նեղ և երկար ( $3\frac{1}{2}$ — $5\frac{1}{2}$  արշին) արկղ,  
որի յատակում ծակեր կան, այդ ծակափնների միջոց



Նկար 57. Ընդհանրական սերմնացան:  
սերմը հաւասարաչափ թափւում է հողի վրայ, Այդ  
սերմնացանները լինում են գլխաւորապէս երկու տե-


սակ: Նրանցից մէկը, որը յայտնի է ընդհանրական  
անունով (նկար 57), ունի հետեւեալ կազմութիւնը.  
սերմնացանի արկղի մէջ նրա երկարութեամբ կայ մի



Նկար 58. Ընդհանրական  
սերմնացանի շրջանակ-  
ները:


միլ (բ, նկար 58), որը մեքենա-  
յի գործելու ժամանակ պտը-  
ւում է. այդ միլի վրայ արկղի  
իւրաքանչիւր ծակի դիմաց (գ)  
յարմարեցրած են ոլորակաձև  
շրջանակներ (ա), որոնք մե-  
քենայի շարժուելու միջոցին,  
սերմերը մօտեցնում են արկղի  
ծակերին: Մի առանձին կոթի

միջոցով կարելի է ծակերը մեծ կամ փոքր բանալ,  
նայելով նօսը թէ խիտ են կամ նոսր ցանել: Մեքենան  
այնպէս է յարմարեցրած, որ այդ ծակերը համապա-  
տասխան լինեն մեքենայի յետևը, կոթի մօտ սար-  
քած ուղեցոյցին, և բոլորն էլ  
միաչափ մեծանան և փոքրա-  
նան: Սերմնացանի արկղի ծա-  
կերի տակ շինած է լինում մի  
երկար տախտակ (նկար 59),  
վրան մեխեր կամ փայտէ ճա-  
ղիկներ ամրացրած, սերմը  
թափելով այդ տախտակի վը-  
րայ, և անցնելով վերը յիշած  
ճաղիկների կամ մեխերի արանքներով, համահասար  
տարածւում է, և այնպէս ընկնում գետին: Այդ տախ-



Նկար 59. Սերմնացանի  
տախտակի ճաղիկները  
(երեսից):


տակը պէտք է շատ հարթ և շոր լինի, որպէսզի ժամանակի ընթացքում նա չծռի ու չճաքճքի: Միև-



Նկար 60. Սերմնացանի տախտակը (կողքեց):

նոյն ժամանակը այդ դեկավար տախտակը այնպէս է յարմարեցրած, որ ցանկացածին պէս սերմերը վրայիցը արագ կամ դանդաղ թափուեն: Տախտակին ուղիղ դիրք տալով սերմը դանդաղ է թափում, իսկ թեք դիրք տալով—աւելի արագ՝ աւելի խիտ ցանելու նպատակով: Ինչ խօսք որ կոլոր և կոկիկ սերմեր ցանելիս


հարկաւոր է աւելի ուղիղ դիրք տալ, քան թեթև և ոչ կոկ սերմեր ցանելիս: Այս բոլորը ուշադիր ցանողը պէտք է աչքի առաջ ունենայ և յարմարեցնի այդ աախտակը ցանքին՝ մեքենայի յետևից գնալու մի-



Նկար 61. Ճախարակաւոր սերմնացան:

ջոցին: Քամիներն առհասարակ շատ քիչ ազդեցութիւն են ունենում այս տեսակ սերմնացաններով ցանելիս, միայն ցանելու միջոցին ցելի երեսին եղած կոշտերից կամ քարերից և կամ թէ չէ մեքենան կանդ-

նեցնելիս և առհասարակ իւրաքանչիւր ստացած հարուածից, սերմը սովորականից աւելի շատ քանակութեամբ է թափում: Նոյն իսկ այդ պատճառով էլ անյարմար է լինում մանր սերմեր ցանելը: Չնայած այս անյարմարութեանը այնուամենայնիւ այս տեսակ սերմնացան մեքենաները գերադասելի են ճախարակաւոր սերմնացան մեքենաներից (նկար 61), իւրեանց հասարակ և ձեռնտու լինելու պատճառով: Ճախարակաւոր սերմնացանի շարժուող միլի վրայ արկղի տակի ծակերի դիմաց շարած են մօտ 12 դոխ, որոնց մէջ պտտում են շուրջը փոսիկներ հանած ճախարակներ (նկ. 62), որոնք իրանց փոսիկներով առնելով դոխերի մէջ ածած սերմը, թափում են այդ համահաւասար քանակութեամբ:




Նկար 62. Սերմնացանի ճախարակ:

Այս տեսակ սերմնացան մեքենաներով սերմի թափուելը, շատացնելն ու քչացնելը նմանապէս կատարւում է մի կոթի միջոցով, որը աւել կամ պակաս է բաց անում ճախարակի փոսիկները:

ՇԱՐՔ-ՇԱՐՔ ՅԱՆՈՂ ՍԵՐՄՆԱՅԱՆ. Չարք-չարք ցանող սերմնացաններն (նկար 63) աւելի թանգ և բարդ են և լաւ են բանում միայն բոլորովին հարթ, լաւ մշակուած ու տախանած վարելահողերում: Իսկ մեր գիւղացիները և հողատէրերը, որոնց համար գրում ենք գլխաւորապէս այս գիրքը,


**ՇԱՐՔ-ՇԱՐՔ ՅԱՆՈՂ ՍԵՐՄՆԱՅԱՆ.**

Չարք-չարք ցանող սերմնացաններն (նկար 63) աւելի թանգ և բարդ են և լաւ են բանում միայն բոլորովին հարթ, լաւ մշակուած ու տախանած վարելահողերում: Իսկ մեր գիւղացիները և հողատէրերը, որոնց համար գրում ենք գլխաւորապէս այս գիրքը,



Նկար 63. Չարք-չարք ցանող մեքենայ:


առ այժմ սոցանից օգտուելու մեծ հարկաւորութիւն չեն ունենալ, նոյն իսկ այդ պատճառով էլ բաց ենք թողնում սոցա նկարագրութիւնը: Իսկ հատ հատ ցանող սերմնացան մեքենաները յատկացրած են լինում գլխաւորապէս կամ գետնախնձոր (կարթոֆիլ) կամ բազուկ, կամ սիմինդր ցանելու համար:



Նկար 64. Սերմածածկիչ:


**ՍԵՐՄԱԶԱԶԿԻՉ.**—Ցանած սերմերը հողով ծածկելու համար կայ և մի յատուկ գործիք, որը կոչւում է սերմածածկիչ (նկար 64): Դա շատ քիչ է

տարբերում բազմախոփ արօրից իւր խոփիկների ձեւով: Մինչդեռ բազմախոփ արօրի խոփիկների ծայրերը հարթ են և գետնի մէջ գնում են տափակ: Սորա խոփիկների (նկար. 65)



Նկար 65. Սերմածածկիչների խոփիչների ձևը:


առաջի մասերը ցած են նայում, իսկ յետի մասերը բարձրացրած են, այնպէս որ դրանց շարժուելու միջոցին հողը բաժանւում է երկու կողմերի վրայ, ճեղքւում է, շուռ է գալիս աջ ու ձախ, և այդպիսով ծածկում սերմը: Ինչ կարծիք, որ չոր և կոշտերից ազատ ցելում սերմածածկիչը լաւ է գործ կատարում, քան թէ խոնաւ և կոշտերով լի ցելում. որովհետև այդ վերջին դէպքում հողը մանր և չոր չլինելով՝ չէ կարողանում բոլոր տարածութիւնը հաւասարապէս ծածկել:



Նկար 66. Չեռքի բրէշ:

**ԲՐԻՉ.**—Թէ վնասակար բոյսերը քաղհանելու և թէ արմատապտուղ բոյսերի բուկը տալու կամ լքցնելու համար գործադրւում է բրիչ կոչուած գործիքը՝ որը լինում է ձեռքի (նկար 66) և ձիու (նկար 67):

Հողի ո՛չ շատ խոնաւ և ո՛չ էլ շատ շոր ժամանակը բրիչ չէ կարելի գործածել, այն պատճա-




Նկար 67. Չիու բրիչ:

ռով, որ խոնաւ ժամանակուայ պոկած և վայր ձգած խոտերը շատ անգամ նորից աճում են, իսկ հողի շոր ժամանակը այդ խոտերի միայն գլխներն են պոկում բրիչով՝ արմատները գետնի մէջ թողնելով՝ որոնցից բոյսը դարձեալ աճում է:

Բրիչը գործ են ածում կարգով ցանած բոյսերի մէջ դուրս եկած աւելորդ խոտերը պոկելու համար:


Հարկաւոր ենք համարում այստեղ յիշել, որ կայ մի ամենայարմար միջոց քաղհանելու, որ երբեմնապէս են միայն գործադրում, այն էլ մեծ զգուշութեամբ: Երբ գետինը լաւ շոր է, և ցանքսը դեռ ևս ծիլ չէ տուել (ցողուն քշել), այլ միայն տերևներն են գետնից վեր բարձրացել, այդ ժամանակ անասուններին ուտեցնում են ցանած բոյսի այդ տերևները, միւս դուրս եկած խոտերի հետ: Սրանից յետոյ բոյսը աւելի ոյժով է ծիլ

ձգում և աճում: Գետնի թաց ժամանակը, այդ միջոցը նրա համար է անյարմար գործադրել, որ անասունները արածելիս տրորում են ցանքսը և շատ անգամ էլ արմատով գետնից պոկում, հանում են ամբողջ բոյսը:



Նկար 68. Բուկը տուող գործիք:


Բուկը տալու կամ լքցնելու համար ևս գործադրում են բրիչը: Դորանով առաջ քաղհան են անում, և երբ քաղհանած խոտերը շորանում են, նոր բրիչով կամ յատուկ սրա համար շինած բուկը տուող (կալաշարի) գործիքով (նկար 68) լքցնում են արմատապտուղ կամ բուկը տալ պահանջող բոյսերի շորս կողմը, ուր թումբի նման հաւաքում են հողը: Բուկ տուող գործիքը շատ նման է այն երկթեանի գութանին, որի երկու թեւը մի խոփի վրայ է շինած և ձևիչ չունի:





### ՀՆՁՈՂ ՄԵՔԵՆՆԵՑ

**Պ**երանդիով (նկար 69) հնձելու անյարմարութիւնը մեզ թւում է, որ ամեն մի հնձուր լաւ զգացած կլինի, քանի որ իւր աչքով տեսնում է, թէ գերանդու հասկերին խփելիս սրքան շատ հատիկներ են թափւում գետին: Այդ թափուող բազմաթիւ հատիկների կորուստը անշուշտ ոչ թէ մի, այլ մի քանի տասնեակ անգամ համոզել է հնձուորին, թէ որչափ մեծ է գերանդիով հնձելուց առաջացած վնասը: Մանգաղով (նկար 70) հնձելն ինչ խօսք, որ առաւել օգտաւէտ է, որովհետև այդ դէպքում հատիկները այնքան մեծ քանակութեամբ չեն թափւում. սակայն հնձելու այդ ձևն էլ շատ թանգ է նստում և աշխատանքը շատ դժուար է: Գերանդիով և մանգաղով հնձելու անյարմարութիւնից և վնասից ազատում է երկրագործին մեքենայով հնձելը:




Նկար 69. Գերանդի:



Նկար 70. Մանգաղ:

Հնձող մեքենայի գործածութիւնը անհամեմատ շատացնում է ստացած արդիւնքը և տնտեսում է երկրագործի ժամանակը, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ ամեն մի ըսպէն թանգ է նորա համար: Հնձող մեքենայով հնձելիս իւրաքանչիւր օրավարից ստացւում է հինգից մինչև տասն կոտ աւելի հատիկ, քան գերանդիով հնձելու ժամանակ, որը անկասկած մեծ առաւելութիւն է երկրագործի համար: Հնձող մեքենան փոքր ինչ աւելի բարդ է, քան այն մեքենաները, որոնց նկարները տուել ենք:



Նկար 71. Հնձող մեքենայ:

Այս մեքենայում լուծւում են երկու-երեք ձի կամ մէկ-երկու լուծ եղը, որոնք գնում են արտի ձախ կողմից և պտտուելով արտի շորս կողմովը հնձում են նրան (նկար 71) և խուրձ-խուրձ ձգում են մեքենայի յետևը՝ կապելու պատրաստ:

Հնձող մեքենան բանելիս պտտում են 2—4  
ատամնաւոր փոքրիկ անիւներ, որոնք աջ ու ձախ



Նկար 72. Հնձող մեքենայի դանակը:

արագութեամբ շարժողութեան են ենթարկում մի  
սղոցանման դանակ (նկար 72): Այս դանակը շար-  
ժուելիս անցնում է մի շարք ճեղքուած մատների




Նկար 73.



Նկար 74.

Հնձող մեքենայի մատները:


միջով (նկար 73, 74 և 77) և մկրատի պէս կտրում  
է հասկերը, որոնց թերում մօտեցնում է այդ դա-



Նկար 75. Հնձող մեքենայի վիւակը (առանձին):

Նակին մի առանձին վիւակ (նկար 75): Կտրուած հաս-  
կերը թափւում են մի տարտակամածի վրայ, որի

վրայից կամ մեքենայի ինքնաշարժ փոցխերը կամ մի  
առանձին բանուոր խուրձ-խուրձ ձգում է գետին՝ ա-  
ռանց կապելու դրանց: Ինչ կարծիք, որ բանուորը  
սկզբում յոգնում է և չէ կարողանում կարգին կատա-  
րել իւր գործը, սակայն կարճ միջոցում նա վարժը-  
ւում է, ընտելանում է մեքենայի վրայ աշխատե-



Նկար 76. Հնձող մեքենայ առանց փոցխերի:

լուն: Այս վերջին տեսակ հնձող մեքենան (նկար 76)  
էժան է, բայց առաջին տեսակը աւելի լաւ է, թէ  
իւր թեթեւ բանելով և թէ ինքնաշարժ փոցխերի  
միջոցով խուրձեր ձգելովը, չէ պահանջում աւելորդ  
բանուոր, և շատ անգամ էլ աւելորդ ձիւ խնայողու-  
թիւն է առաջ բերում, մանաւանդ որ մեքենաներից  
շատերը այնպէս են յարմարեցրած, որ ըստ հնձո-


ղի ցանկութեան կարող են մեծ կամ փոքր խուր-  
ձեր անել:



Նկար 77. Հնձող մեքենայի մասները:


Կարկտահար եղած, քամու պտուկեցրած կամ  
այլ և այլ պատճառներից խճճուած արտերն էլ մե-  
քենայով աւելի լաւ են հնձոււմ, եթէ միայն հաս-  
կերի գլխները մի քանի վերջոկ բարձր են գեանի  
երևոյց:

Անհրաժեշտ ենք  
համարում ասել, որ  
մեքենայի դանակը  
(նկար 72 և 78) պէտք  
է շատ սուր լինի և  
այնպէս արագ զնայ  
ու գայ, որ ճեղքուած  
մատների և դանակի  
ատամների մէջ ըն-  
կած հասկերը կտրա-  
տուեն և ոչ թէ պոկ-  
սեն: Գանակը պէտք  
է հեշտութեամբ հա-



Նկար 78. Հնձող մեքենայի դանակը  
և մատները. աա—դանակը, բ—մատ-  
ները, գ—մատների ճեղքերը, դ—  
հասկերի կտրուելու տեղը դանակի  
շարժողութեան ժամանակ:

նուի իր տեղից և նորից տեղը դրուի, որպէսզի բա-  
նելիս օրը երկու անգամ—մէկ առաւօտ, մէկ էլ ճա-  
շին, կարելի լինի բլթացած (բերանը քօռացած) դա-  
նակը փոխարինել սրած դանակով: Այս պատճառով  
ամեն մի հնձող մեքենայ պէտք է երկու դանակ ու-  
նենայ, որպէսզի մէկը սրելիս, միւսը կարելի լինի  
գործադրել, մեքենան անգործ չմնալու համար:



Նկար 79. Խոտ հնձող մեքենայ:

Խոտ հնձելու համար գործ է գրոււմ նոյն մե-  
քենան՝ միայն աւելի պարզ կազմութեամբ. նա չէ  
ունենում տախտակամած, վիլակ, փոցխեր և այլն:  
Գորա դանակը աւելի փոքր է, ուստի և աւելի փոքր  
տարածութեամբ է կտրոււմ խոտը, թէպէտ հարկաւոր  
է ասել, որ իր թեթեւութեան պատճառով դա օրա-  
կան կարողանում է հնձել մինչև 10 օրավար  
խոտ, այն ինչ հասկ հնձող մեքենան նոյն պայման-


ներում եօթն օրավարից աւելի չէ հնձում, և այսպիսով երկուսն էլ կատարում են 20—30 լաւ հընձուորի գործ:

Հարկաւոր դէպքերում, երբ օրինակ հողը սաստիկ քարքարոտ է, կամ ունի ուրիշ անյարմարութիւն, դանակը կտորուէլուց պաշտպանելու համար, բանուօրը գործ է դնում աջակողմը յարմարեցրած մի կոթ, որի միջոցով իսկոյն և եթ բարձրանում է դանակը իւր բոլոր մասերով: Լաւ կլինի եթէ պառկած խոտը և արտը հնձելու համար այդ կոթը յարմարեցրած լինի նաև դանակի բերանը բոլորովին ցածացնելու:

Առհասարակ հնձող մեքենան լաւ է բանում հարթ տեղերում, որտեղ փոսեր և կոշտեր չկան և երբ դետինը խոնաւ չէ լինում, որից ակները կարող են թաղուել և ծանրացնել մեքենայի ընթացքը: Որովհետև գիւղատնտեսական բոլոր մեքենաներից ամենաբարդը սա է, ուստի և առանձին զգուշութեամբ պէտք է նրան բանեցնել, շուտ-շուտ պէտք է նայել, որ պտտուող մասերը չտաքանան, չկեղտոտուեն, թէև զգուշութեան համար այդ մասերը լաւ տեսակներում կենդրոնացած են լինում միշտ մի տեղում և ընդհանուր մի վահանով ծածկուած պաշտպանութեան համար: Հարկաւոր չէ մոռանալ շուտ-շուտ, երկու-երեք ժամը մէկ անգամ, ձիթել առանցքակալերը և ուշադրութիւն դարձնել, որ չտաքանան այդ տեղերը: Պտուտակներին պէտք է նոյնպէս մէկ-մէկ նայել, որ չթուլանան ու այդպիսով չվնասեն մեքենային:


Բանելիս չէ կարելի դարձնել ձիերին դէպի ձախ, դորանից թէ դանակը և թէ փոցխերը կանգ են առնում կամ կարող են կտորատուել:

Դանակները սրելու համար լաւ է ունենալ և առանձին ոտի ոյժով բանող հետան (նրկար 80), որի վրայ աւելի յարմար և հեշտ է սրում դանակը: Անկասկած դանակի միայն վերի թէք մասն են սրում, աշխատելով չփոխել դանակի սկզբնական ձևը: Դանակի կտորած ատամները իսկոյն պէտք է փոխուեն, որպէսզի չծանրացնեն մեքենայի գնացքը:




Նկար 80. Հետան:

Կայ մէկ տեսակ հնձող մեքենայ ևս, որը հընձում է, խուրձ է անում և ինքն էլ կապում է խուրձը, բայց այդ տեսակը աւելի բարդ է լինում: Նա բոլորովին հարթ և ամեն խոշընդոտից ազատ արտումն է միայն բանում և պահանջում է գործադրողից լաւ հասկացողութիւն մեքենայի մասերի և նրա բանեցնելու ձևերի մասին. նա յարմար է միայն մեծ կալուածքներում գործադրուելու, ուստի և կրաւականանանք միայն յիշելով այդ մեքենայի մասին:



**Ե**րբ ցանկանում են անձրևներից թացացած կամ հեկց նոր հնձած խոնաւ խոտը լաւ չորացնել, որպէսզի ապահով կերպով, փտելուց աներկիւղ, կարողանան դէզ գնել, գործ են դնում խոտասփռիչ մեքենան (նկար 81), որ 40—60 մարդի գործ է կատարում՝ —խոտը թափ է տալիս, ցնցում է և շաղ է տալիս





Նկար 81. Խոտասփռիչ մեքենայ:

բացած, որպէսզի քամին և արևը նրան լաւ չորացնեն: Այս մեքենայի անիւները 3—4 անգամ արագ են

պտտում ակներից, նա ունի փոցիխ նման մասներ, որոնք շրջելով սունու շորս կողմովը անդադար վեր են բարձրացնում խոտը գետնից և ձգում յետևի կողմը խառն ի խուռն կերպով:

Այդ մեքենան համեմատաբար աւելի բարդ է և թանկ, բանում է միմեանց փոփոխող երկ-երկու դոյզ ձիերով:






ՓՈՅՍԻ ՄԵՔԵՆԵՑ

**Խ**ոտ հաւաքելը, որ առհասարակ շատ մշակ է պահանջում և թանկ է նստում, կարճ ժամանակում, քիչ ծախսով և մեծ քանակութեամբ ժողովում է ձիու փոցխով:

Փոցխի մեքենան մէկ ձիով և մէկ մարդով հաւաքում է մէկ օրումը այնքան, ինչքան 45—60 մարդը մի օրում դժուարութեամբ կարող են ժողովել հնձած խոտը ձեռքի փոցխով (նկ. 82): Նկար 82. Ձեռքի փոցխ: Եթէ մի 50—60 օրավար խոտ կամ հնձած արտ կայ ժողովելու, հարկաւոր է լինում վարձել 200—250 մարդ, իսկ սրանց օրավարձի գնով կարելի է գնել մէկ լաւ փոցխի մեքենայ, որով 6—7 օրումը մէկ մարդը մէկ ձիով կժողովի հունձը: Հաշուած է, որ այս մեքենայով մի օրավար սեղ հաւաքելը նստում է 5—6 կոպէկ:

Այս մեքենայով հաւաքում են նաև արտերումը այստեղ այնտեղ մնացած հասկերը և այնպէս յաջո-

ղակ, որ անսպասելի կերպով, շատ կարճ միջոցում, միայն այս թափած հասկերը հաւաքելով մի 3—4 հարիւր օրավար սեղից—մեքենան այնքան շահ է բերում, որքան ծախսուած է նրա վրայ: Մէկ օրումը փոցխի մեքենայով կարելի է 10—15 օրավար տարածութեան վրայ եղած հնձած խոտը հաւաքել և այն էլ շատ մաքուր կերպով:




Նկար 83. Փոցխի մեքենայ:

Փոցխը (նկար 83) շատ հասարակ և ամենին հասկանալի մեքենայ է: Երկու բարձր, շատ թեթեւ և բարակ ափներ դրած են իրարից երեք և ավելի արշին հեռաւորութեամբ, որոնց մէջ սարքած է լինում 24-ից մինչև 40 պողպատեայ ամուր, էլաստիքական կեռ մատներ, որոնցից իւրաքանչիւրը շարժում է առանձին: Այս վերջին յատկութիւնը տալիս է մեծ յարմարութիւն անհարթ սեղերում խոտ ժողովելիս, ուր

մատներից մի քանիսը ցածանալով և միւսները բարձրանալով—նայած գետնի մակերևոյթի ձևին (փոսիկներին, քարերին և թմբերին)—ժողովում են բոլոր ցած և բարձր տեղերում թափթփած թէ խոտը և թէ հասկերը:

Չիու փոցիսի վրայ յարմարեցրած է նաև բանուորի նստելու տեղը՝ ձիերին քշելու և մեքենան կա-




Նկար 84. Փոցիսի մեքենայ:

ռավարելու համար: Երբ փոցիսը բաւականաչափ խոտ է հաւաքել (նկար 84) և հարկաւոր է այդ խոտը հանել փոցիսի տակից, այդ ժամանակ բանուորը՝ առանց իւր տեղից իջնելու՝ բարձրացնում է փոցիսի մատները մի առանձին յարմարեցրած լծակով կամ թէ չէ ոտով

սեղմելով ոտնկալն: Այդպիսով թողնելով մի անգամ հաւաքած խոտը, կրկին վայր է ձգում փոցիսի մատները և այսպէս շարունակում հաւաքելը՝ կոհակ-կոհակ շարելով խոտը, որ յետոյ հեշտութեամբ դէպ է դըրում կամ թէ չէ՝ բարձւում է սայլերի վրայ ու տարւում, ուր հարկաւոր է:

Երբ մեքենան բանեցնելու հարկաւորութիւն չըկայ կամ հարկաւոր է ճանապարհ տանել, դորա համար էլ նա յարմարութիւն ունի. մատները գետնին զուր քսուելուց ազատ պահելու համար նրանց կարելի է բարձրացնել և այնպէս տանել:



Նկար 85. Փոցիսի մեքենայ (հասարակ տեսակը):

Կան և այլ աւելի հասարակ կազմութիւն ունեցող ձիու փոցիսեր, որոնցից մէկի նկարը զնում ենք այստեղ (նկար 85): Այս տեսակ փոցիսի մեքենայ կարելի է շինել և մեղանում: Այս վերջին փոցիսը բանեցնում են մի զոյգ ձիով կամ եզով: Դա իր երկու կողմերիցն ևս միատեսակ յարմարութիւններ ունի շինած, որովհետև այդ տեսակները պտտելու շատ

անյարմար են: Սրա պակասութիւնը այն է, որ վերերը յիշած տեսակների նման չէ կարողանում փոստեղերում եղած հասկը կամ խոտը ժողովել, նաև արտերում և հնձատեղերում պատահած քարերին և թմբերին զիպչելով կանգնում է և կամ նրա մատները կոտրատում են, իսկ հարթ հաւասար տեղերում այս տեսակի փոցխը շատ լաւ է բանում:




**Ն**րկրագործական մեքենաներից ոչ մէկը այնքան շատ չէ տարածուել գիւղատնտեսութեան մէջ, որքան կասելու մեքենան: Սորա օգուտը այնքան



Նկար 86. Կամ (տակի կողմը):


պարզ է, որ մինչև անգամ վերջին գիւղացին ևս դուրսութեամբ համոզուում է այդ բանում:

Այս մեքենան պահանջում է քիչ ժամանակ և քիչ աշխատանք, այնպէս որ սորա ամենափոքրիկ տեսակով կարելի է կասել մի ժամում այնքան խրձեր, որքան հազիւ թէ կարողանայ կասել սովորական մեր



Նկար 87. Կամ:


կամը (նկար 87) երկու-երեք օրուայ մէջ: Մհա այդ է պատճառը, որ, ինչպէս ասացինք վերև, այս մեքենան շատ է տարածուել ամեն տեղ:



Նկար 88. Ձեռքի կտակու մեքենայ:

Կտակու մեքենաները լինում են ձեռքի (նկ. 88),

ձիու և շողիի, բաժանում են գլխաւորապէս երկու տեսակի՝ ա) ասամներով և բ) թակիչներով: Այս



Նկար 90. Կլան:




Նկար 91. Մերձագլան:

Կտակու մեքենայի ծեծող մասերը:

երկու տեսակի կատող մեքենաների հատիկները ծեծող մասերը (նկար 90, 92, 94, 95) շինած են լինում գլանաձև, և պտոյտ են գալիս իրանց համապատասխան մերձագլանում (նկար 91):

**ԱՏԱՄՆԱԻՈՐ ԿԱՍԵ-  
ԼՈՒ ՄԵՔԵՆԱՅ.**


Կտակու մեքենաների հատիկներ ծեծող մասը (նկար 92), ունենում է երեքից մինչև հինգ միմեանցից գուզահեռական շրջապատներ (և,



Նկար 92. Ատամնաւոր գլան:

և...), որոնց միջովը անցնում է մի միլ (զ): Այդ շրջապատների վրայից երկարութեամբ խփուած են ձողեր (բ, բ...) միմեանցից հաւասար հեռաւորութեամբ, իսկ այդ ձողերի վրայ ամրացրած են երկա-

Թէ կամ պողպատէ ատամներ (գ, գ...) Գլանը պտոյտ է գալիս մերձագլանի մէջ (նկար 91), որը շրջապատում է գլանի միայն վեցերորդ մասը (գ, նկար 93), տեղաւորուում է սորա վերը կամ ներքը և իր ներսի կողմից շարած ունի նմանապէս ատամներ, որոնց արանքներովն, գլանի պտոյտ գալու ժամանակը, անցնում են նրա վրի ատամները: Գծուար է ասել, թէ որն է աւելի յարմար՝ մերձագլանի գլանից զիւրի թէ ներքև սարքած լինելը: Երբ մերձագլանը գլանի վերեւից յարմարեցրած է գուցէլաւ է նրա համար, որ հեշտութեամբ կարելի է մերձագլանի ատամները մօտեցնել և հեռացնել գլանի ատամներից և այդ տեսակների միջից հատիկները մեքենայի առջևն են թափում, այն ինչ մերձագլանը ներքև ունեցող կասելու մեքենաները, շատ անգամ հատիկները ձգում են 10-ից մինչև 20 արշին հեռաւորութեամբ, թէպէտ այս տեսակները բանեցնելու համար աւելի դիւրին են, խուրձերը մեքենայի բերանը տալը աւելի հեշտ է և որոշ ժամանակա-




Նկար 93. Կասելու մեքենայի միջի սարքը. ա—գլանը, բ—գլանի միջը, գ—ատամները, դ—մերձագլանը, ե—բերանի տակի սեղանը, գ—մերձագլանի տախտակը, թ—ծղնոտահարը:

քած լինելը: Երբ մերձագլանը գլանի վերեւից յարմարեցրած է գուցէլաւ է նրա համար, որ հեշտութեամբ կարելի է մերձագլանի ատամները մօտեցնել և հեռացնել գլանի ատամներից և այդ տեսակների միջից հատիկները մեքենայի առջևն են թափում, այն ինչ մերձագլանը ներքև ունեցող կասելու մեքենաները, շատ անգամ հատիկները ձգում են 10-ից մինչև 20 արշին հեռաւորութեամբ, թէպէտ այս տեսակները բանեցնելու համար աւելի դիւրին են, խուրձերը մեքենայի բերանը տալը աւելի հեշտ է և որոշ ժամանակա-

միջոցում այս տեսակը աւելի շատ է կասում, քան առաջին յիշած տեսակը:

Հասիկ ծեծող գլանի ձուլիւրի արանքը լինում է կամ ծածկած (նկար 94) կամ բաց (նկար 92): Գլծ-




Նկար 94. Ատամաւոր գլան:

ուար է ասել գրանցից սրի է աւելի լաւ, թէպէտ բացը, ինչպէս ցոյց է աւելի փորձը, փոքր ինչ թեթեւ է բանում:

Հասիկի գլուխը, սրընթաց անցնելով սաստիկ արագութեամբ պտտուող գլանի և անշարժ մերձագլանի ատամների արանքով, ստանում է մի քանի սաստիկ հարուածներ, որոնցից և սերմը թափուում է հասիկից ու ընկնում:

**ԹԱԿԻՉԱԻՈՐ ԿԱՍԵԼՈՒ ՄԵՔԵՆԱՅ.** Կասելու մեքենաների գլանները (նկար 95) միևնոյն տեսակի են լինում, ինչ տեսակ որ են ատամաւոր կասելու մեքենաներինը, միայն սորա ձողիկները (ա, բ, է) կամ քանոնաձև են լինում (նկար 90) կամ աւելի հաստ են լի-



Նկար 95. Թակիշատը գլան:

նում ու գրսի կողմը (բ, բ...) փոս-փոս արած (քեռոթ-քեռոթ) (նկար 96): Միևնույն տեսակի թակիշներ ամ-



Նկար 96. Թակիշատը մեքե-քենայի ձողիկի երեսը:

րացրած են լինում և մերձագլանի վրայ (նկար 91), որը շրջապատում է գլանի կէս մասը: Հասկի գլուխները՝ անցնելով այդ արագ պտտուող գլանի և անշարժ մերձագլանի միջովը՝ համ հարուած են ստանում, համ էլ տրորում են, որից և հասկի միջի հատիկները թափում են: Որովհետև ատամնաւորի անշարժ մերձագլանը՝ պտտուող գլանի միայն վեցերորդ մասն է կազմում, իսկ թակիշատը գլանի ամբողջ կէս մասը, ուստի և այս վերջինը բանեցնելու համար աւելի ոյժ է պահանջում. սակայն պէտք է նկատել, որ թակիշատները աւելի մաքուր են կասում, մանաւանդ կոշտ հասկերը:

Կասելու մեքենաների գլանի երկարութեանը


նայելով՝ կարելի է լմանալ նրա գործ կատարելու շփր և բանեցնելու համար պահանջելի ոյժը, որի օրինակը դնում ենք այստեղ աւելի հասկանալի լինելու համար:

Փրանի կարողութիւնը:	Մեքենան քանի շոր և միջակ մեծութեան խուրձ է կասում ամեն մի ժամում:		Փրանի ձի է հարկաւոր քանեցնելու համար:	Փրանի բանուոր է հարկաւոր:
	Աշնան	Գարնան		
8	50—60	80—100	2եռքէ է	6
10	100	120—150	1—2	7
11	125	150—200	2	7
12	150	200—225	3	8
13	150—175	225—275	4	8
14	200—220	300—350	4	10
15	220—250	350—400	6	12
16	300—350	350—450	6—8	15

Այս ցուցակի օգնութեամբ ամեն մի գելդատնտես կարող է, իւր կալին նայած, ընտրել կասելու մեքենայ: Անշուշտ, եթէ հարկաւոր է շուտ վերջացնել կասելը, պէտք է ընտրել մեծը, իսկ եթէ ժամանակը նշանակութիւն չունի և կարելի է ձմեռն էլ ուրիշ գործերից ազատ միջոցներին—կասել, այն ժամանակ ձեռնաու է փոքրը ընտրել: Իսկ ինչ վերաբերում է վերջի երկու տեսակին, որոնք 6—8 ձի

են պահանջում իրենց բանկցնելու համար, լաւ է բանեցնել ոչ թէ ձիերով, այլ շոգիի կամ այլ ուժով:

Լաւ կասելու համար գլանը (նկար 97) պէտք է շատ արագ պտոյտ դայ: Չեռքի կասելու մեքենայի գլանը մէկ րոպէումը պէտք է պտոյտ գայ 6—7 հարիւր անգամ, ձիերով բանողների գլանը 800—900 անգամ, իսկ շոգիի ուժով բանողներինը 1000—1200



Նկար 97. Ատամնուոր կասելու մեքենայ (ատանց սեղանի, որ լաւ նկատուի գլանը):

անգամ: Եթէ մեքենան այս յիշած հաշիւներիցը քիչ է պատում, այն ժամանակ նա վատ է կասում և շատ քողաւ է թողում, իսկ եթէ մեքենան աւելի շատ է պատում այն ժամանակ նա վնասում է: Քանի գլանի շրջապատը աւելի մեծ է, այնքան լաւ է կասելու

մեքենան այն պատճառով, որ այդ դէպքում երկար կամ թաց հասկերը շեն փաթաթւում և բանեցնելը խանգարում: Կոշա և խոշոր հասկեր կասելու համար աւելի յարմար են թակիչաւոր մեքենաները և ատամնաւորներից այն տեսակները



Նկար 98. Կեռ ատամ:

միայն, որոնց վրայ ատամները շատ են և պտոյտը կատարում է արագ: Ատամներն էլ եթէ փոքր կեռ են (նկար 98), թեթեւութիւն են տալիս մեքենայի բանելուն,

թէ և ըստ մեծի մասին, գործարաններում հեշտութեան համար ատամները ուղիղ են շինում (նկար 99):

Կասելու մեքենաների, մանաւանդ թակիչաւոր տեսակների, մերձազրանը շինում է ծակծկած երկաթից կամ թուջից: Այս վերջին տեսակը նրանով է վատ, որ շուտ կարող է կոտրուել, մանաւանդ եթէ ձմեռն են կասում, և կասելու միջոցին այդ տեսակ մերձազրանի արանքները շուտով լցւում են յարգով ու փոշիով, որից մեքենան վատ է կասում և ջարդում հատիկները:




Նկար 99. Ուղիղ ատամ:

Գլանի և մերձազրանի երկարութիւնները և լայնութիւնները միմեանց հետ կապ չունեն բոլորովին, թէպէտ մի քանի աւելի խնամքով շինած մեքենա-

ներում, մերձագլանը՝ նայած գլանի արագ կամ դանդաղ պտտուելուն՝ երկար կամ կարճ են շինում. եթէ դանդաղ է պտտում՝ երկար, և ընդհակառակը արագ պտտելիս՝ կարճ:

Պտուտակների, կամ աւելի յարմար է, շեղ կենդրոնների (նկար 100) միջոցով մօտեցնում կամ հեռացնում են մերձագլանը գլանից, որպէսզի հասկերը աւելի մաքուր կասեն: Մերձագլանը, սկզբից հաշուելով (առաջի կողմը) հէնց այնտեղ, որտեղից հասկերը մտնում են դուրս մէջ, յարմարեցնում են սկզբում մօտաւորապէս  $\frac{11}{16}$  վերջով հեռու գլանից, մէջտեղում  $\frac{6}{16}$  ( $\frac{3}{8}$ ) վերջով հեռու և վերջում կամ այնտեղ, որտեղից դուրս են գալիս ծեծուած հասկերը  $\frac{3}{16}$  վերջով հեռու \*): Եթէ այսպէս յարմարեցնելուց յետ ևս մերքենան ջարդուած հատիկներ է դուրս ձգում, հարկաւոր է փոքր ինչ էլ հեռացնել մերձագլանը գլանից, իսկ եթէ մաքուր չէ կտտում և հասկերի մէջ ցորեն է մնում, այսինքն շատ քոզաւ է դուրս գալիս, հարկաւոր է մերձագլանը մօտեցնել գլանին:




Նկար 100. Չեղ կենդրոններ (ա, ա)

Կտտելու մերքենան (նկար 101) գործածելիս հարկաւոր է, որ ոյժկալի (տես նկ. 116) մէջ լծած ձիերը

\*) Ահա այս չափերի երկարութիւնը. —  $\frac{3}{16}$  վերջ —  $\frac{11}{16}$  վ. —  $\frac{6}{16}$  վ.

մի քանի պտոյտ անելուց յետոյ միայն, երբ գլանի պտոյտը կանոնաւորուած լինի, սկսեն կտտելը, իսկ գլանի պտոյտի այդ կանոնաւորուելն իմացում է, երբ մի առանձին տեսակ դողանջիւն է բարձրանում:




Նկար 101. Կտտելու մերքենայի հասարակ տեսակը:

Եթէ կտտելու մերքենան լաւ չէ յարմարեցրած հարթաշափով և ուղղահայեացով, եթէ տատանում է կամ թրխկոց է լսում ատամները իրար դիպչելուց, և պտուտակների թոյլութիւնից, այդպիսի դէպքերում հարկաւոր է այդ ատմներ կարգի դնել և այնպէս բանեցնել, որ հէնց սկզբից մերքենան կտորատուելուց պահպանեն:

Ինչ կարծիք, որ հասկերը աւելի լաւ են ծեծուում, երբ հնձելուց յետ իսկոյն և եթ սկսում են նույն կտտելը: Մերքենայով կտտելիս, հարկաւոր է առաջ քանզի խուրձերի կապերը և այնպէս ձգել մերքենայի մէջ, այդ խուրձերը իւրաքանչիւր անգամ հա-


լասար հաստութեամբ պէտք է տալ մեքենայի բերանը (ա—նկար 107), որ մեքենայի մէջն ևս հաւասարապէս առաջ ընթանան, և ոչ թէ մի կողմը հաստ կամ շատ, միւս կողմը բարակ կամ քիչ: Որովհետև հարկաւոր է իսկապէս խուրձի գլուխը կասել, այդ պատճառով խուրձը մեքենայի բերանը հասկի կողմից են դնում, որ կասի, յետոյ խուրձը բաց են թողնում և



Նկ. 102. Կապած խուրձ:

մի ակնթարթում ամբողջ խուրձը գլանը խլում է կասողի ձեռքից և արագութեամբ տանում մեքենայի մէջ: Գորա համար մի առանձին սեղանի մօտ (նկար 103), որ մեքենային պատկանող մասերից մէկն է, մէկ բանուոր պէտք է անդադար քանդէ խուրձերը կապերից և սեղանի վրայով մօտեցնի կասողին: Եթէ խորոմ են կասում, հարկաւոր է քիչ-քիչ և բարակ շերտերով անց կացնել գլանի և մերձագլանի արանքով: Ասածներինցս պարզ հասկանալի է, որ խորոմը աւելի երկար ժամանակ է պահանջում կասելու համար, քան խուրձը: Միևնույն ժամանակն էլ խորոմը այնքան էլ կատարելապէս չէ կասուում, ինչպէս կարգին կապած խուրձը:

Քանելու միջոցին հարկաւոր է ժամանակ առ ժամանակ այն առանցքակալներին, որոնց մէջ արա-



Նկար 103. Կասելու մեքենայ: (Նշ կողմում նկարած է սեղանը):

գութեամբ են պտոյտ գալիս սիւրբը, ձեռք դնել և շլթողնել, որ տաքանան կամ անկանոն շարժեն միւլերը իրենց առանցքակալներումը: Ուշադրութիւն դարձնել, որ շլթուլանան պտուտակները, մեքենան ձիթել օրը երկու-երեք անգամ, իսկ աւելի շուտ-շուտ գլանի միւլերի վրեխները:

Եթէ ծուռում, կամ փշանում, կամ կոտրում է մեքենայի մէջ մի բան, հարկաւոր է իսկոյն և եթէ կանգնեցնել մեքենան և ուղիւ վնասուածը, որով-

հետև մի շնչին բանից շատ անգամ ամբողջ մեքենան խախտում է և վնասում:

Կասելու մեքենաների հարկաւոր մասերից մէկն էլ ծղնտուահարն է, թէև պատահում են կասելու մեքենաներ առանց ադ մասի ևս:

Ծղնտահարը բաժանում է երկար և շմանրացած ծղնտաները դարմանից և հատիկներից, երբ դորա դուրս են գալիս մեկ կնայի միջից և ընկնում են ու թափւում դորա (դ—նկ. 107) վրա: Սա տանում է հետև է ձգում ծղնտաները, իսկ թեղը թափւում է սորա ծակերից գետին: Այսպիսով թեղելն հեշտանում է, երբ թեղելու համար մնում են միայն հատիկներն ու դարմանը:

Ծղնտահարերը լինում են զանազան տեսակների ու երկարութեան: Լաւ տեսակները մտ չորս արշին երկարութեան են լինում

և ունենում են չորս-հինգ հարիչներ (նկար 105), որոնք անդադար բարձրանալով ու ցածանալով




հարում են ծղնտալի թեղը և բաժանում իրարից: Երկար ծղնտահարերը, թէպէտ աւելի

Նկար 105. Ծղնտահարի հարիչների ծայրերը (5 հատ):

կատարելութեամբ են ցնցում ծղնտը քան կարճերը, բայց և աւելի ոյժ են պահանջում բանեցնող մեքենայից:

Ծղնտահարը պէտք է առանձին լինի և ոչ թէ միացրած կասելու մեքենայի հետ: Իսկ բանեցնե-



Նկար 104. Կասելու մեքենայի երբ ծղնտահարով (առի կողմում—ծղնտահարն է, իսկ աջ կողմում—կասելու մեքենան):



Եւ որովհետեւ այս կասելու մեքենաները բարդ են և ձեռք են բերուում միայն մեծ կալուածներում, ուստի այստեղ դոցա համար մանրամասնութիւնների մէջ մտնելը, կշեղի մեզ մեր նախագծած նպատակից, որի պատճառով էլ այդ մանրամասնութիւնները աւելորդ ենք համարում այստեղ յիշել:




**Կ**ասելուց յետոյ հատիկները լինում են դեռ ևս խառն դարմանի և այլ մասերի հետ, ինչպէս քոզաւի, հողի, քարի, թողի, աւազի և զանազան խոտերի սերմերի հետ, որոնցից հատիկները բաժանելու համար հարկաւորում է քամել թեղը դատիչ մեքենայով:

Քամելու կամ քամու տալու մեքենան (նկ. 108) բաժանում և առանձնացնում է թեղից միատեսակ ծանրութիւն և մեծութիւն ունեցող սերմերը, հեռացնելով դոցանից դարմանը, քոզաւը, աւազը, հողը և մասամբ էլ վատ սերմերը: Այդ պատճառով, և որովհետեւ ամեն արտի թեղ միատեսակ չի լինում, այլ պարունակում է նրա մէջ զանազան տոկոսի հատիկ, դորա համար հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել քամելու մեքենայի մաղերի ընտրութեան և դարսուածքի վերայ, բացի այդ՝ նայել քամու կանոնաւորման, մաղերի թեքման, թեղի համահաւասար քամահարելուն և այլն: Այս մեքենաներն էլ նմանապէս զանազան տեսակների են բաժանուում, որոնցից

իւրաքանչիւրը յատկացրած է լինում կամ շատ խո-  
շոր, կամ շատ դարմանոտ և կամ քիչ դարմանոտ, կամ  
վերջապէս անդարման կասուածքները թեղելու:

Քամելու մեքենան իր մէջ ունի հողմահար 4  
կամ 5 թևով, որը ձեռքի, ձիու կամ շողիի ոյժով  
պտոյտ է գալիս բաւականին արագ (150-ից մինչև



Նկար 108. Քամելու մեքենայ:

200 և աւելի անգամ մէկ րոպէումը) և փշելով մեքե-  
նայի մէջ շարած մաղերի արանքներում, քամում է  
թեղը, որի թեթև մասերը, այսինքն դարմանը,  
նուազ և դատարկ հատիկները մեքենայի առաջի կող-


մից դուրս են ձգւում, իսկ ծանր հատիկները—բա-  
ւականին մաքրուած—գլորւում են առանձին մաղի  
կամ տախտակամածի վրայով մեքենայի յետևի կողմը:

Քամին կանոնաւորելու համար հողմահարի մլի  
մօտ մեքենայի աջ և ձախ կողմից շինած է լինում  
ծակեր և առանձին վահանների միջոցով կարելի է  
դրանց շատ կամ քիչ բաց անել քամին շատացնելու  
և քիչացնելու համար:

Մեքենայի վրայ սարքած է մէկ դոխ թեղի հա-  
մար, այդ պէտք է լինի այնպէս յարմարեցրած, որպէս  
դի թեղողը հեշտութեամբ կարողանայ լքցնել նրան  
և դիտի թեղի աստիճանաբար պակասելն: Այս դոխի  
տակի բացուածքը, որտեղից թեղը թափւում է մա-  
ղերի վրայ, պէտք է յարմարեցրած լինի՝ ըստ պա-  
հանջի մեծացնելու և փոքրացնելու. դա հարկաւոր  
է լինում նրա համար, որ թեղը լինում է կամ շատ կամ  
քիչ դարմանոտ, կամ վերջապէս կրկնաքամելու, կամ  
երկրորդ անգամը քամելով մաքուր սերմ ստանալու  
համար: Առհասարակ քանի քիչ-քիչ են լցնում դոխը և  
հանգիստ, միատեսակ են պտտում մեքենայի կոթը, այն-  
քան սերմը աւելի մաքուր է ստացւում և հակառակը:

Որպէս դի թեղը դոխից հաւասարաշափ թափուի,  
այնպէս են յարմարեցնում, որ դոխը ինքն երերուի  
և այդ շարժումից թափի իր միջից թեղը, կամ դո-  
խի տակին շինում են մի առանձին ցնցիչ, կամ թէ  
սարքում են մատներ, որոնք շարժուելով թափում են  
թեղը մաղերի վրայ:

Մաղերը յարկաւոր է այնպէս յարմարեցնել, որ քամին նրանց թէ վրայով, թէ միջերով փչի ազատ և մի ուղղութեամբ, և ոչ թէ դիպչելով դրանց՝ դանազան ուղղութիւն ստանայ և այդպիսով ցրուի հատիկները ու դարմանը. այդ դէպքում հատիկները թերի կամ վատ են իտտակում դարմանից: Զըջանակի մէջ մաղերն էլ պէտք է ամրացրած լինեն՝ լաւ, ձիգ և կոկ: Սոցա ամեն մէկի ծակերն պէտք է համահասար մեծութիւն ունենան և ոչ թէ այնպէս, որ միևնոյն մաղի մէջ մի ծակը փոքրը լինի, միւսը մեծ, որը հասարակ տեսակներում



ըրակ տեսակներում և ոչ թէ այնպէս, որ միևնոյն մաղի մէջ մի ծակը փոքրը լինի, միւսը մեծ, որը հասարակ տեսակներում և ոչ թէ այնպէս, որ միևնոյն մաղի մէջ մի ծակը փոքրը լինի, միւսը մեծ, որը հասարակ տեսակներում և ոչ թէ այնպէս, որ միևնոյն մաղի մէջ մի ծակը փոքրը լինի, միւսը մեծ, որը հասարակ տեսակներում

Նկար 109. Քամելու մեքենայի միջի սարքը. ա—դոխ՝ թեղի ածելու տեղը, բ—ցնցիչ՝ թեղը մաղերի վրայ թաշատ անգամ է փոզ մասը, գ—վերի մաղը\*), դ—երկրորդ մաղը, ե—քարմաղը:

Մաղերը իրանց շըջանակով պէտք է ազատ կերպով ներս ու դուրս քաշուեն իրանց փորուածքներում,

\*) Այս մաղի վրայ բաժանում են քողաղ, խոշոր դարմանը և մեծ-կոշտ հողերը, իսկ հատիկները, դարմանը և թեղի միջի մանրուները թափուելով սրա ծակերից, երկրորդ (դ) մաղի վրայ բաժանում են իրարից. դարմանը հողմահարի (ս) քամու շնորհիւ դուրս է ձգում մեքենայից, իսկ սերմը թողնելով իրանից մեծ մասերը այդ երկրորդ մաղի վրայ, թափում է դրա ծակերով երրորդ (ե) մաղի վրայ, որը սերմից բաժանում է կուտը: Եթէ դարմանի հետ սերմի հատիկ-


որպէս զի փոխելու յարմար լինին և ոչ թէ ամրացրած լինին մշտական իրանց տեղերում: Միևնոյն ժամանակ մաղերը պէտք է յարմարեցրած լինեն առաջը կամ յետը բարձրացնելու ու ցածացնելու, ուզած թեքութիւնը տալու համար, և այս յարմարութիւնը ամեն մի մաղ առանձին պէտք է ունենայ և ոչ թէ այնպէս լինի շինուած, որ մինը թէքելիս՝ բոլորն էլ թէքուին նրա հետ: Մեքենայի ներքին մասում՝ բաւականին թէք դրութեամբ դրուած պէտք է լինի մի առանձին շարժուող մաղ (ե), մանր ծակերով, որի վրայով հատիկները գլորում են ներքև, իսկ այն, ինչ որ փոքր է հատիկներից՝ աւազ, հող, դանազան սերմեր, ջարդուած հատիկներ (կուտ) և այլն, այդ ծակատիների միջից կընկնեն զետին՝ մեքենայի տակը: Որովհետև թեթև հատիկները շատ անգամ քամին տանում է դարմանի հետ և մօտիկ վայր է ձգում, այդ պատճառով մեքենայի առջևից նրա ներքևի մասում շինուած է լինում մի պահպանակ (է—նկար 109), որը բարձրացնելով չի թողնում, որ այդ սերմերը զնան դարմանի հետ:

Երբ հարկաւոր է քամել ոչ թէ մեքենայով կառածը, այլ մեր կամերի տակից մեր սովորական ձևով ստացած թեղը, որը միշտ շատ դարմանոտ է լինում,

ներ են դուրս ձգում մեքենայի միջից, այն ժամանակ բարձրացնում են պահպանակը (է) կամ աւելի հանգարտ են պարտեցնում մեքենան, իսկ եթէ դարման է գնում հատիկների հետ, ցածացնում են պահպանակը կամ աւելի արագ են պարտեցնում մեքենան:

գործադրում են երկար և յետ ու առաջ շարժուող մազերով քամելու մեքենայ: Գորա վերի մազը պէտք է լինի թիթեղից շինած և ոչ թէ երկաթէ լարից (մաֆթուլից), նրա համար, որ մեր թեղը իւր մէջ ունենում է շատ քողառ, որոնք շատ շուտով բռնում են մաֆթուլէ մազի ծակերը և արգելում կանոնաւոր թեղելուն:

Աւելի լաւ մաքրելու համար թեղած հատիկները քամում են երկու և երեք անգամ. իւրաքանչիւր քամելիս մազերը փոխում են՝ յարմարեցնելով հատիկների և մէջը եղած խառնուրդի ծանրութեանը, դրանց ձևին, կամ շատութեանը ու սակաւութեանը: Քիչ դարմանոտ սերմը և արդէն թեղածը բոլորովին խտակելու համար յարմար են այն տեսակ մեքենաները, որոնց վերի մազերը աջ ու ձախ, իսկ տակի մազը յետ ու առաջ է շարժուում:




ՋԱՏԻՉ ՄԵՔԵՆԱՅ

**Ե**րբ հատիկները բաւականաչափ մաքրուած են և ցանկութիւն կայ դրանց միջից հեռացնել փշրուածները կամ ընտրել մեծերը կամ աւելի ծանր հատիկները կամ հեռացնել կողմնակի, միւս բոյսերի սերմերը, որոնք ձևով և ծանրութիւնով տարբեր են, կամ թէ չէ պէտք է նոյն իսկ հատիկները մի քանի տեսակի բաժանել, այն ժամանակ գործադրում են այս կամ այն տեսակ զաւտիչ մեքենայ:

Ջատիչները մեծ նշանակութիւն ունին հողագործի տնտեսութեան մէջ. «ինչ որ ցանես, այն էլ կը հնձես» ասում է ամեն ազգի մէջ ընդունուած առածը, ուրեմն սորա բուն մտքի համեմատ հարկաւոր է ցանելու համար դատել սերմը ո՛չ թէ միայն վատ և վնասակար սերմերի հատիկներից, ոչ թէ գիծ ցորենից և գիւլուլից այլ և սերմի խոշոր լաւագոյն և առողջ հատիկները նիհար, ջարդուած և վատ հատիկ-

ներից: Հողագործը ցանելով միայն լաւագոյնը և իստակը, կարող կլինի մի քանի տարուց յետ վերջացնել իր արտի միջից թէ գիժը, թէ միւս վնասակար և վատ սերմերը, ահա ինչու համար է ցանկալի այս մեքենաների գործադրութեան տարածուիլը մեր ընկած գիւղասնտեսութեան մէջ:




Նկար 110. Զատիչ մեքենայ:

Այս մեքենաները (նկար 110) իստակած սերմը բաժանում են երկու, երեք և չորս տեսակի և, ինչ կարծիք, ամենալաւ տեսակը պէտք է պահել ցանելու համար, և այսպէս տարէց տարի շարունակել:

Կան և այլ տեսակ գատիչներ, որոնք գլանաձև են լինում (նկար 111) և բաժանում են սերմը մի

քանի տեսակի, կամ գտում են ցորենի միջից միւս սերմերը ու քարերը:


Այս վերջի գատիչների գլանի վերի, այսինքն առաջի մասը, հաստ թիթեղից հեշտ փոխուղ մաղ է



Նկար 111. Գիւլուլի գատիչ:

լինում, յարմարեցրած այն մանր աղբին, որ իստակելու են հատիկների միջից, երկրորդ ցած մասը միջի կողմից ամբողջ տարածութեան վրայ ունի փոսիկներ (նկ. 112) այնպիսի ձևի և մեծութեան, որ դրանց մէջ տեղաւորուել կարողանան գիւլուլի, վիզի, սիսեռի և կոտրատուած ու այլ սերմերի հատիկները, բայց ոչ երկարուկ սերմեր, ինչպիսի են ցորենի,

գարու, խրբուկի և այլն: Այդ աւերորդ կլոր հատիկները մեքենայի բանելու ժամանակ, մտնելով դրա փոսիկների մէջ, բարձրանում են վերև և այդ տեղից թափւում գր-



Նկար 112. Գիւլուկի գատի-  
շի փոսիկները (իսկական  
մեծութեան):

Մեքենան շրջելիս սկզբում հատիկները թափում են մի առանձին տափակ մաղի վրայ և այդ թափելու միջոցին իստակվում են հոդ-  
մահարի միջոցով թողից, թէ-  
փից, դարմանից և այլն, իսկ




խոժոռ աղբը անցնում է մա-  
ղի վրայից և թափւում ա-  
ռանձին: Այս մաղի միջով անցած թէ հատիկնե-  
րը և թէ միւս սերմերը ընկնում են գլանի մէջ և  
սկզբում գլանաձև մաղով իստակվում մանր աղբից,  
իսկ երկրորդ փոսիկաւոր մասում, ինչպէս ասեցինք  
վերև, գիւլուկից, վիգից և այլն:

Այս տեսակ գլանաձև դատիչներով զատում են նաև երկար հատիկները կարճ հատիկներից, ինչպէս օրինակ խրբուկը ցորենից, ցորենը հաճարից և այլն:




**Մ**եր ժողովուրդը սովոր է իւր անասուններին դարման ուտեցնելու, բայց որովհետև մեր նկարագը-  
րած կասելու մեքենաները դարման չեն շինում,  
այդ պատճառով այն ծղնոտները, որոնք դուրս  
են գալիս ամբողջապէս, դրանց կտրատում են յար-  
զի մեքենայով (նկար 114): Սակայն աչքի առաջ ու-  
նենալով, որ այդպէս կտորած դարմանը շատ  
կոշտ է և անասունները դժուարութեամբ են ուտում,  
մենք վստահանում ենք առաջարկել հետևեալը: Ծղ-  
նոտը յարզի մեքենայով կտրատելուց յետոյ պէտք  
է փռել մէկ կալատեղում և շատ կարճ ժա-  
մանակ կամով ծեծել, տրորել, կամ թէ չէ՝ դրա  
վրայ անասուններ ման ածել, որոնք շրջելով՝ ոտքե-  
րովը շատ շուտով կփափկացնեն այդ կտրատած

ծղնոտը: Ինչ կարծիք որ այս ձևով դարման ստանալ կարելի է և ձմեռը գործից ազատ ժամանակ: Թէպէտ և կան մի քանի յարդմանրիչ մեքենաներ,



Նկար 114. Յարդի մեքենայ:

բայց դրանք կատարելագործուած չեն և չեն կարողանում պատրաստել մեր դարմանի պէս փափուկ, նուրբ և մանր դարման, դրա համար էլ թէպէտ տալիս ենք այդ մեքենայի նկարը, բայց չենք կարող երաշխուոր լինել դրանց կատարելագործութեանը,




Նկար 115. Յարդմանրիչ մեքենայ:

նամանաւանդ այդ տեսակ յարդմանրիչները (նկար 115) բանում են շոգիի և ջրի ոյժով, իսկ ձիու ոյժկալներից միայն մեծերն են կարողանում բանեցնել դրանց: Այս պատճառով այստեղ առաջ չենք բերում դրանց նկարագրութիւնը:



# ՕՃԱՆԴԱԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ




ինչև այժմ նկարած մեքենաների բանեցնելու համար հարկաւոր է կամ մարդու, կամ ձիու, կամ այլ անասունի, կամ վերջապէս մի որևէ իցէ առարկայի, կամ մեքենայի ոյժ, այս ոյժ տուող առարկաները կոչուում են *ոյժկալ* մեքենաներ:

Գիւղատնտեսութեան մէջ գործադրում են գլխաւորապէս ձիու, մասամբ շոգիի և կերօսիների ոյժկալներ:

**Մ**ինչև այժմ նկարած մեքենաների բանեցնելու համար հարկաւոր է կամ մարդու, կամ ձիու, կամ այլ անասունի, կամ վերջապէս մի որևէ իցէ առարկայի, կամ մեքենայի ոյժ, այս ոյժ տուող առարկաները կոչուում են *ոյժկալ* մեքենաներ:

րը, իսկ քամու և ջրի ոյժկալները շատ սակաւ են պատահում, այդ պատճառաւ մենք աւելի մանրամասնաբար կխօսենք միայն ձիու ոյժկալի մասին. իսկ ինչ վերաբերում է միւս տեսակներին, դրանց մասին միայն համառօտակի կը յիշենք:

**ՁԻՈՒ ՈՅԺԿԱԼ.** Ձիու ոյժկալը լինում է երկու տեսակի. ա) դեկաւոր և բ) տոփիչ: Թէ առաջին և թէ երկրորդ տեսակին շարժողութեան ենթարկելու համար, գործ են ածուում ձիեր, իսկ աւելի քիչ դէպքերում՝ եզ, գոմէշ, շուն, էշ և այլ շորքոտանիներ:



Նկար 116. Ձիու դեկաւոր ոյժկալ:

Ձիու ոյժկալը (նկար 116 և 117) լինում է մէկից մինչև չորս ձի լծելու: Թէպէտ լինում են և աւելի լծելու ևս, միայն ինչպէս ցոյց է տուել փորձը, չորսից աւելի ձի լծելն անօգուտ է և աւելորդ ծախս, որովհետև մէկ ձին եթէ դժուարութեամբ է տանում օրինակ— 50 փուտ ապրանք, նոյն սայլով չորս ձին կը տանեն ոչ թէ 200 փուլ, ինչպէս հարկաւոր էր կարծել, այլ 160 փուլ միայն. իսկ եթէ ութը ձի լծենք, կը տանեն 200 փուլ ապրանք, այսինքն ամեն մի ձին 50 փուլի փոխարէն միայն 25 փուլ: Սրա համա-

ձայն էլ շորսից աւելի ձիերի ոյժը անօգուտ է համարում, թէև շատ անգամ լծում են:

Ղեկաւոր ոյժկալը (նկար 116 և 117) աւելի ընդունելութիւն է գտել գիւղատնտեսութեան մէջ քան թէ տփիչը և միւս տեսակի ոյժկալներն:




Նկ. 117. Ղեկաւոր ոյժկալ:

ւոր ոյժկալն առհասարակ բաղկացած է լինում մի, երկու կամ երեք զոյգ ատամնաւոր անիւներից: Երբ մեքենայի մէջ լծած անասունները լրացնում են մի շրջան, այդ ատամնաւոր անիւները մեծից փոքրերին հաղորդուելով պտտում են վերջին անիւը 20-ից մինչև 100 անգամ, որի հետ միացրած է լինում առհասարակ բանեցնող միւր: Եւ որովհետև մէկ ըսպէ ժամանակում ձիերը մօտաւորապէս 2—3 անգամ են անցնում մեքենայի շորս կողմով, այդ պատճառով վերջին անիւը մի ըսպէի ընթացքում անում է 60-ից մինչև 300 պտոյտ, և այդ պտոյտների քանակութիւնը աւելի է լինում, քանի լծողեկը կարճ է, և քիչ է լինում, երբ լծողեկը երկար է լինում\*):

Այս տեսակ ոյժկալները պէտք է հասարակ և հասկանալի ձև ունենան, լինեն ամուր և թեթև, թեթև էլ բանեն, վերի մեծ անիւը (նկար 118) պէտք է ուղիղ առանց այս և այն կողմը տատանուելու պը-

\*) Օրինակ՝ եթէ լծողեկը 6 արշին երկարութիւն ունի— ձիանը 2 պտոյտ են անում մէկ ըսպէյումը, եթէ 5½ արշին — 3 պտոյտ, եթէ 3½ արշին— 3½ պտոյտ:

տըտուի: Ոյժկալի փայտէ մասերը պէտք է ամուր միացրած լինեն, անիւների ատամները պէտք է միա-



Րուս. № 44

Նկար 118. Ղեկաւոր ոյժկալի վերի մասերը:

տեսակ լաւ բանն իրար, որպէս զի ձիերի յանկարծ ձգելիս կամ կանգնելիս կամ յետ քաշելիս չկոտրուի մեքենան, թէպէտ ապահովելու և կոտրուելուց պահ-

պանելու համար շատ անգամ ոյժկալի վրայ մի մաս սարքած է լինում մի առանձին գործիք:

Ոյժկալները բանեցնելու համար լինում են կամ մշտական մի տեղում ամրացնելու կամ ակների վրայ (նկար 119), հարկաւոր ժամանակը մի տեղից միւս տեղ փոխադրելու համար:




Նկար 119. Չիու ոյժակալ ակների վրայ:

Որպէս զի մշտական մի տեղում ամրացրած ոյժկալի բանեցնող միլը գործողութեան միջոցին չվնասի ձիերի ոտքերը, ձիերի ման գալու տեղը այնքան բարձր են շինում, որ այդ միլը հնար լինի ծածկել տախտակով, բացի այդ, ձիերի ման գալու տեղն էլ պէտք է հարթ լինի, որ բանող ձիերը չըջնու ժամանակ բարձր ու ցած չանեն և չը յոգնեն: Եւ որովհետև կարճ լծաղեկները շուտ են յոգնեցնում լծած անասուններին, դրա համար լաւ է եթէ լծաղեկերը երկար են (5½—6 արշին):

Գայ և այնպիսի ոյժկալ մեքենայ (նկ. 120), որի առամնաւոր անիւների մի մասը ամրացրած է մի սիւնի վրայ, և դրա ոյժը փոխադրող անիւից ձգած է կաշէ գօտի դէպի բանող մեքենան: Այդ գօտին անասունների գլխների վերեւիցն է տարած, նրա համար, որ լծած անասունները կարողանան աղատ շքրջել մեքենայի շորս կողմը: Այդ տեսակ սիւնի վրայ

ամրացրած ոյժկալն անյարմար է միայն նորանով, որ




Նկար 120. Գեկաւոր ոյժակալ սիւնով:


սիւնի դողալուց շուտով խախտում են մեքենայի մա-

սերը, ուրեմն և խանգարւում է գործի կանոնաւորութիւնը:

Մշտական մի տեղ հաստատ բանող ոճիկալ մեքենան (նկար 121) պէտք է հաստատել իւր տեղում ուղղահայեացի և հարթաշափի օգնութեամբ, որպէս զի նա յաջող բանելու համար—բլրորովին ուղիղ գլրուած լինի գետնին:




Նկար 121. Դեկատոր ոյժիկալի ամբացնելը:




Նկար 122. Բանեցնող միլ յօդակապը:

Նոյն այդ նպատակով, շրջանակի շորս կողմը, որի վրայ գտնւում է մեքենան (նկար 122) ամուր ցցեր (բ) են խփում: Երբ մեքենայի բանեցնող մրլերը (ե, ե, նկ. 122) բաղկացած են լինում երկու մասերը միմեանց միացնող յօդակապով (դ), այդ դէպքում պէտք է աշխատել, որ այդ յօդակապը (նկ. 123) անկիւնով չը միացնէ այդ մրլերը (նկ. 124), այլ հնար եղածին շափ ուղիղ միմեանց դիմաց մէկ գծի լինին դրուած (նկ. 125), որովհետև քանի աւելի նկատելի անկիւն է կազմւում այդ յօ-



Նկար 123. Բանեցնող միլ յօդակապի ձևը:


դակապի միացրած տեղում, այնքան աւելի դրժուարանում է մեքենայի շարժուիլը:



Նկար 124. Մեծ անկիւնով միացրած մրլեր:

Տուփիչները (նկ. 126) նման են արկղանման սայլակի և բանում են ոչ թէ անասունների ձգելու ոյժով, այլ դրանց ծանրութեամբ:


Ուրեմն տոփիչում բանեցնելու համար հարկաւոր է գերադասել անասունների աւելի ծանր տեսակները: Եւ որովհետև բանել կամ չբանելը անասունների կամքից չէ կախուած, այդ պատճառով տոփիչում ծոյլ անասուններն էլ լաւ գործ են կատարում:



Նկար 125. Առանց անկիւնի միացրած մրլեր:

Անասուններին կանգնեցնում են այդ արկղի մէջ շարժական, թեք և անվերջ շրջանակաձև տախտակամածի վրայ (նկ. 127), որը իրար հետ յօդերով (դ... դ...) միացրած տախտակներից (բ. բ...) է բաղկացած, որոնք կազմում են աննկատելի աստիճաններ, և այդ աստիճանները ձիերի կամ այլ անասունների (նկար 128) անդադար միկնոյն տեղում տոփիչուց


շարժում են. մէկը զնում է, միւսը գալիս՝ շարունակաբար, այնպէս որ այդ շորս բոլորից էլ շարժական



Նկար 126. Տոփիչ մեքենայ:

յօդերով միացրած յատակը անդադար պտտում է դորս վերայ կանգնած ձիերի ծանրութիւնից, իսկ ձիերը դարձեալ իւրեանց տեղումն են մնում ու անդադար տփում: Տախտակամածի այդ տեսակ շարժուելուց պտտում է մի անիւ (գ, նկ. 127), որը և բանեցնում է հարկաւոր մեքենան:

Անասուններն տփիչի մէջ բարձրացնելու հա-



Նկար 127. Տփիչի ներքի բանոց և շարժուող մասերը:

մար հարկաւոր է մի եռանկիւնի կամրջիկ շինել և ձիերը պէտք է լինեն առանց նալի: Գողից նամացած տախտակների վրայ հարկաւոր է միշտ հող, աւազ, կամ մոխիր ցանել:

Տփիչը նրանով է գերազանցում ղեկաւոր ոյժկալից, որ անասունները ստիպուած են ակամայ ոտքերը միշտ բարձր ու ցած անել և այդպիսով ոյժկալ մեքենան բանեցնել, մինչև անգամ առանց քշելու:




Նկար 128. Չան կամ ղոշի պտտիկ տփիչ:

Այն ինչ ղեկաւոր ոյժկալը բանեցնելիս ձիերը կամ արագ են զնում կամ դանդաղ, կամ կանգնում են յանկարծ, կամ յետ ձգում և փչացնում կամ ջարդում մեքենան, և այդպիսով գործն էլ կիսակատար թողնում: Այս հանգամանքը ի նկատի ունենալով, թէև տփիչը լաւագոյն է ղեկաւոր ոյժկալից, բայց որովհետև տփիչի վրայ անասունները առհասարակ նե-

դանում են, ուստի և դեկատոր ոյժկալը աւելի է տարածուած:


Կայ մէկ ուրիշ տեսակ տոփիչ ևս, որը Ռուսաստանում բաւականին տարածուած է գիւղական հարուստների մէջ: Դոցա շինում են ատաղձագործները, միայն դոքա իւրեանց թանգութեան և մեծ տարածութիւն բռնելու պատճառով, նաև ամեն մի սովորական ատաղձագործի ոյժից բարձր լինելով, այնքան էլ շատ չեն տարածուում, ուստի և մենք էլ չենք նկարագրում դոցա մանրամասնութիւնները:

**ՈՅԺԻ ՓՈԽԱՏՈՒ.** Մենք վերևը ասացինք, որ ձիու ոյժկալն անում է 60-ից մինչև 200 պտոյտ մէկ ըոպէումը, բայց կան և այնպիսի մեքենաներ, որոնց անիւները պահանջում են մի քանի հարիւր պտոյտ ամէն մի ըոպէումը, և ահա այդ ոյժկալի և գործ կատարող մեքենայի մէջ տեղում յարմարեցնում են մի միջնորդական մեքենայ պտոյտների թիւը աւելացնելու համար, այդ մեքենաները կոչւում են *ոյժի փոխատու* (նկարներ 124, 125, 129 և 130) դոքա բաղկացած են լինում մէկ կամ երկու անիւներից (նկար 130) կամ մի կամ երկու զոյգ ատամնաւոր անիւներից (նկ. 129), որոնք



Նկար 129. Ոյժի փոխատու


մեծ արագութեամբ պտտում են մի անիւ, որի վրայից կաշէ գօտի է տարած բանող մեքենայի անիւի վրայ: Այս




Նկար 130. Ոյժի փոխատու:

ոյժի փոխատուն յարմար է և նորանով, որ սորա մի վրայ կարելի է ստրքել և մի քանի այլ անիւներ այլ և այլ մեքենաներ բանեցնելու համար:

Ոյժի փոխատուից (տես նկար 131) օգտուելու նպատակով պէտք է մի այլ անիւին ձրգած կաշէ գօտին (գ. գ.) այնպէս յարմարեցնել, որ բանելիս դուրս չընկնի, ահա այդ նպատակով այդ անիւների մըլերը (գ. գ. նկար 132 և 133) շինում են իրարից զուգահեռական դրութեամբ, այնպէս որ, եթէ այդ անիւների կեդրոնով մի երևակայական ուղիղ գիծ (աբ, նկար 132) անցկացնելու լինենք, այդ գիծը պէտք է երկու անիւներն ևս բաժանէ երկ-երկու միմեանց հաւասար մասերի, այս անց զէպըում եթէ անիւները հաւասար լայնութիւն չունին, իսկ եթէ անիւները հաւասար լայնութեան են, այն միւսի պարժամանակ այնպիսի դիրք պէտք է տալ միմեանց վերաբերութեամբ, որ եթէ դոցանից մինից լար (եե, դդ) տանելու լինենք զէպի միւսը,




Նկ. 131. Մէկ անիւի ոյժով անիւի ոյժով



Նկար 132. Բանեցնող և բանող մլերի սարքերը:

այդ լարին միատեսակ հալին անիւնների երկու կողմերն ևս (ե-ե-ե-ե և դ-դ-դ-դ):



Նկար 133. Բանեցնող և բանող մլերի սարքերը:


Հարկաւոր չէ, որ գօտին շատ զլած լինի, քանի անիւնները միմեանցից հեռու լինին դրուած, այնքան էլ գօտիները պէտք է թոյլ կերպով լինին հագցրած անիւնների վրայ:



Նկար 134. Անիւտը ջրի ոյժկալ:


**ՋՐԻ ՈՅԺԿԱԼ.** Ջուրը հին ժամանակներից սկսած արդէն գործադրում էր որպէս ոյժ շրաղացներ կամ սանդիառուներ (զինգ) բանեցնելու համար:

Գիւղատնտեսութեան մէջ ոյժկալները գործ են ածուում գլխաւորապէս այնպիսի մեքենաներ բանեցնելու, որոնք հասկերից հատիկներ են հանում, կամ հատիկները դատում են դարմանից և ազրից: Իսկ ջուրը, թէպէտ մեծ յարմարութիւն է ներկայացնում, ինչպէս ծախս չպահանջող և հաստատուն ոյժ, բայց և այնպէս այդ ոյժով գիւղատնտեսութեան մէջ շատ քիչ են օգտուում, որովհետև ջուրը առհասարակ ձորերով և անյարմար տեղերով է հոսում, ուր հասկերը տանել մեծ նեղութիւն է պատճառում:




Նկար 135. Ջրի ոյժկալ:

Ջրի ոյժկալը լինում է գլխաւորապէս երկու տեսակի—մէկը բաց անիւտը ուղղահայեաց կանգնեցրած (նկ. 135), որի թիակներին ջուրը խփելով պտտում է, իսկ միւտը (նկար 136) լինում է ծածկած ալը հորիզոնական կամ ուղղահայեաց շինած, որին կոչում են ջրի թոփ: Այդ տեսակ ոյժկալների գաղափարը աւած է մեր ժողովրդի սովորական ջրի թոփերից (նկար 137):




Նկար 136. Ջրի բարդ թոփեր:

Մեր յիշած առաջին կարգի անհրաձև ջրի ոյժկարը բաժանուում է երեք տեսակի. ա) ջուրը իր արագ գնացքով անդադար հրում է անիւի ներքև հասած թիակները (է, է, նկար 138) և պտտում է անիւը, բ) ջուրը խփում է անիւի շրջանի մէջ տեղի թիակներին և այս հարուածից պտտում



Նկար 137. Ջրի հասարակ թոփ:

է ամբողջ անիւը և գ) ջուրը անիւի վերևից (տես նկար 135) թափում է դորա ջուրջը շինած ամանների (է) մէջ, որոնք իւրեանց ծանրութեամբ հրում են անիւը դէպի ցած: Այս երեք տեսակներից իւրաքանչիւրն էլ իւրեանց կարգին բաժանուում են դանազան տեսակների, համա-




Նկար 138. Ջրի ոյժկալ:

ձայն իւրեանց թիակների և ամանների ձևերի և միւս այլ մանրամասնութիւններով: Թոփով ոյժկալները նոյնպէս բաժանուում են շատ և շատ տեսակների, համեմատաբար աւելի բարդ են և բանում են կամ ջրի հարուածից կամ նորա ծանրութիւնից, կամ վերջապէս նրա խողովակների ծըծելով:

**ՔԱՄՈՒ ՈՅԺԿԱԼ.** Ջրի ոյժկալն ամեն տեղ ջրի վրայ յարմարեցնել չէ կարելի, այլ պէտք է անպատճառ ընտրել այնպիսի տեղ, որտեղից ջուրը ոյժով ընկնում է ցած, կազմում է ջրվէժ կամ ջուրը խոր է լինում ու սրընթաց գնում: Իսկ քամու ոյժկալն (նոր տեսակի) ընդհակառակը կարելի է գնել ամեն տեղ, որտեղ յարմար և օգտաւէտ է նրան գնելը:

Քամու ոյժկալներն երկու տեսակի են լինում գլխաւորապէս: Հինը հոլանդական (նկար 139) հասարակ տեսակի է, որի թիւերը ստիպուած են լինում


միշտ դարձնել այս և այն կողմը, նայած թէ քամին խոր ուղղութեամբ է փչում: Քամու ուղղութեան համեմատ թևերին անդադար աջ ու ձախ յաճախակի դարձնելը ստիպուած են լինում աւելի փոթորիկի ժամանակը,



Նկար 139. Հասարակ տեսակի քամու ոյժկալ:

թեամբ փոփոխում է իւր ուղղութիւնը: Այս յաճախակի փոփոխութիւնների և գործկատարելու ոյժի անհամեմատ աւելի թոյլ լինելու պատճառաւ,


սորանից աւելի նախադասում են ամերիքական միւսնոր տեսակ քամու ոյժկալն (նկար 140): Սորա աւելի թեթեւ են լինում, գործածութիւնն էլ աւելի արդիւնաւոր: Քամու ուղղութիւնը փոփոխուելիս քամու ոյժկալի թևերը իրանք իրանց փոխում են զընդհինները, դառնալով միշտ քամու գէմ: Բացի այդ քամու սաստկանալու ժամանակը



Նկար 140. Նոր տեսակի քամու ոյժկալ:


թևերը (նկար 141) իրանց-իրանց փոքրացնում են այն մակերևոյթը, որին խփում է քամին և այդպի-

սով թէ բաներն շարունակում առանց պտոյտը արագացնելու և թէ սաստիկ թիփի ժամանակը կտարատուելոց պահպանում ոյժկալ մեքենան: Թէպէտ և փոքր քամին էլ կարողանում է բանեցնել այս վերջին տեսակ քամու ոյժկալն, բայց ինչ խօսք, որ լաւ քամիներն աւելի են նպաստում սորա յաջողակ բանելուն: Նոյն իսկ այդ նպատակով քամու ոյժկալները միշտ կանգնեցնում են բարձր դիրք ունեցող տեղերում, կամ թէ չէ գանազան շինութիւններից և ծառերից բարձր, որպէս զի դորա քամու ոյժը չը ջլատեն ու չը նուազեցնեն:



Նկար 141. Քամու ոյժկալի վերի մասերը:


**ԿՐԱԿԻ ՈՅԺԿԱԼ.** Կրակի ոյժկալն լինում է երկու տեսակի. ա) շոգիի (նկար 142) և բ) կերօսինի (նկար 147): Չոգիի կաթսայի մէջ տաքութիւնից ջուրը գոլորշի է դառնում և այդ գոլորշին բանեցնում է շոգեշարժ մեքենան (նկար 144, 145): Չոգին բարձրանում է և հաւաքուելով շորս կողմից փակած կաթսայի վերի մասում մեծ քանակութեամբ, կազմում է զօրեղ ոյժ, որը արագութեամբ մտնում է խողովակի միջոցով շոգեշարժ մեքենայի մէջ և շար-



Նկար 142. Չոգիի ոյժկալ:

ժողովեան է ենթարկում դորան:


Ուրեմն շոգիի ոյժկալն կազմուած է լինում կաթսայից, որը պատրաստում է գոլորշին և շոգեշարժ մեքենայից, որը ընդունում է շոգիի դորուժիւնը և լինչպէս ոյժ հաղորդում է գործազրուոյ մեքենաներին: Կաթսայի հնոցում վառում են փայտ, քարէ ածուխ, կիզահող, սև նաֆթ (նաֆթի մնացորդ), իսկ գիւղատնտեսութեան մէջ շատ անգամ գործ են ածում նաև ծղնոտ: Ծղնոտով վառելը մեծ յարմարութիւններ ունի, որովհետև գիւղատնտեսութեան մէջ



կասելու ժամանակ մեծ քանակութեամբ ծղնոտ է մնում, միևնոյն ժամանակը սև նաֆթի պէս իսկոյն և եթ կարելի է վառել և վերջացնել կրակը, ուրեմն և գոլորշին միշտ միևնոյն ոյժի պահել կաթսայի մէջ:


Գիւղատնտեսութեան մէջ աւելի յարմար է շոգիի ոյժկալը ակների վրայ (նկար 146) ունենալ տեղից տեղ փոխադրելու համար:

Միւս տեսակի կրակի ոյժկալն—կերօսինի ոյժկալն է: Դա աւելի անվնաս է համարւում, քան շո-




Նկար 144. Չոգեշարժ մեքենայ:

գիւղի ուղիքները, որովհետեւ այդ վերջինում, երբ գոյոր-  
ւելի ուղիք չափից գուրս է լինում, շատ անգամ պա-  
տրուում է կաթսան և վնասներ առաջ բերում: Միև-  
նոյն ժամանակը կերօսիւնի ուղիքները գործադրութեան




Նկար 145. Չոգեշարժ մեքենայ:

համար աւելի էժան է հստում և համեմատաբար աւե-  
լի հասարակ կազմութիւն ունի, քան շոգիւղի ուղիքները,  
ուստի և գործածութեան համար աւելի մատչելի է  
թէ գիւղերում, թէ կալուածքներում:




Նկար 146. Չոգիւղի ուղիք, ակներով:

Այս տեսակ ուղիքները մէջ սպիտակ նաւթի և գազի  
միանալու միջոցին, նոցա գիւղում է մի երեքտարական  
կայծ, որից առաջանում է պայ-  
թուն, ինչից և շարժողութեան է  
ենթարկում այդ մեքենան: Այս  
տեսակ մեքենան նոր գիւղ է և,  
չնայած դորան, արդէն մեծ ըն-  
դունելութիւն է սկսել գտնել  
գիւղատնտեսութեան մէջ:



Նկար 147. Կերօսիւնի  
ուղիք:






Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ժ Ք



**Մ**ուրհակով երկրագործական մեքենա-  
ներ եւ գործիքներ ձեռք ընրել ցանկացող-  
ները ամենից առաջ պէտք է դիմեն իրանց  
գիտական վարչութիւններին, որպէս զի վա-  
ւերացրած վկայական ստանան իրենց ու-  
նեցած հողի, երկրագործական պարագա-  
ների եւ ընդհանրապէս կարողութեան մա-  
սին: Այդ վկայականը Արքունական Բանկի  
անունով գրած յայտարարութեան հետ միա-  
սին պէտք է ներկայացնեն այն գործարա-  
նի կամ պահեստի գրասենեակը, որտեղից  
ցանկանում են երկրագործական մեքենայ  
կամ գործիք գնել: Արքունական Բանկի  
անունով գրած յայտարարութիւնը պէտք է  
ստորագրեն կամ ինքը գնել ցանկացողը, ե-  
թէ մի անձնաւորութիւն է, կամ, եթէ ընկե-

րուծին է, այն ժամանակ այդ ընկերու-  
թեան ջոյրը անդամները: Ստորագրութիւն-  
ները պէտք է վաւերացրած լինեն իրենց  
վոյջտոյց կամ գիւղական վարչութիւնից:



**ԳԻՒԳՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԳՆԵԼՈՒ  
ՀՆՄԱՐ ԱՆԵԼԻՔ ՓՈԽՈՒՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ. ՓԻՆԱՆՍՆԵՐԻ  
Պ. ՆԵՒՈՐՈՐԹ ՀԱՍՏԱՏՈՒՆԸ 1894 Թ. ՅՈՒԼԻՍԻ 6-ԻՆ:**

§ 1. Արքունական Բանկը վարկ (կրեդիտ) է բաց  
անում Ռուսաստանում շինած գիւղատեսակի  
գործիքներ և մեքենաներ գնողների համար և իրեն  
գիմոդներին առանց երաշխաւորի մուրհակով փող է  
պարաք տալիս, ապահովելով այդ փոխառութիւնը՝  
ա) այն բոլոր գործիքներով և մեքենաներով, որոնք  
գտնուում են փոխառուների կալուածքում կամ որոնք  
ձեռք են բերուում այդ փոխ առած դրամով, կամ

բ) հաւատարիմ անձանց երաշխաւորութեամբ, կամ  
գ) անշարժ կալուածքներով:

§ 2. Այս փոխառութիւնները տալիս են Բանկի  
89—107 յօդուածների համաձայն այն գումարից,  
որ սրոշուած է երկրագործական մեքենաներ և գոր-  
ծիքներ գնելու համար, միմիայն այն պայմաններով,  
որոնք ցոյց են տրուած ներքև յիշած յօդուածներում  
(3—20):

§ 3. Գիւղատեսակի գործիքներ և մեքենա-  
ներ գնել ցանկացողները եթէ կամենում են փոխա-  
ռութիւնից օգտուիլ, Արքունական Բանկի տեղական  
ճիւղին այդ մասին յայտարարութիւն են տալիս, մատ-  
նացոյց անելով թէ՛ 1) իսկապէս գիւղատեսակի  
ինչ գործիքներ և մեքենաներ են կամենում գնել,  
2) որքան արժողութեամբ, 3) ո՞ր գործարանից կամ  
պահեստից և 4) առաջին յօդուածում յիշած ապա-  
հովութիւններից ո՞ր տեսակի համաձայն են կամե-  
նում այդ փոխառութիւնը անել:

§ 4. Յայտարարութեանը պէտք է կցել կա-  
լուածքին վերաբերեալ այն բոլոր տեղեկութիւնները,  
որոնք կանոնով սահմանուած են մուրհակով առանց  
երաշխաւորի կալուածատէր փոխառուների համար:  
Եթէ այդ փոխառութիւնը կամենում են ապա-  
հովիլ կալուածքում գտնուած մեքենաներով, այն ժա-  
մանակ, բացի վերը յիշածից, պահանջուում է մանրա-

մասը տեղեկութիւններ ներկայացնել և այդ մեքենաների մասին, յայտնելով թէ դրանք սր տեսակին են պատկանում, ինչ գնի են և թէ որքան ժամանակ է ինչ ձեռք են բերուած:

§ 5. Եթէ կամենում է Բանկի միջոցով գործիւներ և մեքենաներ ձեռք բերել, ոչ թէ սեպհական կալուածք ունեցողը, այլ կալուածքի կապալառուն, այդ դէպքում յայտարարութեան հետ պէտք է ներկայացնել Բանկին կապալի պայմանաթուղթը, այդպիսի փոխառութեան ժամանակամիջոցը կապալի լրանալու ժամանակից աւելի լինել չէ կարող:

§ 6. Եթէ Արքունական Բանկը վճռում է խընդրած փոխառութիւնը տալ, փոխառուի նիւթական կարողութիւնից և այդ մասին ներկայացրած ապահովութեան հաւաստիութիւնից անկախ, Բանկի փոխատու մասնաժողովը (КОМИТЕТЪ) իրաւունք ունի ծախսելիք դրամի օգուտը և վնասը քննել, աչքի առաջ ունենալով այդ կալուածքի անտեսական հանդամանքները:

§ 7. Գիւղատնտեսական գործիւքներ և մեքենաներ գնելու փոխառութիւնները ապահովում են ինչպէս կալուածքում գտնուած երկրագործական սեպհական իրեղէններով, նոյնպէս և այդ փոխառութեամբ նոր գնելիք մեքենաներով ու գործիւքներով: Այդ փոխառութիւնները արւում են ներկայացրած գրաւա-

կանների արժողութեան միայն 50%-ի շափով և նոյն իսկ գնելիք գործիւքների և մեքենաների իսկական արժողութիւնից ոչ աւելի:

